«Տրոպինկա» ամսագրի գրադարանը

Վ. Ցորն, Ե. Միկուլա, Գ. Վեզիկովա

ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

СВЕТ НА ВОСТОКЕ

Խմբագիրներ՝ *Ֆ. Գուլինյան, Ս. Հարությունյան*
Թարգմանիչ՝ *Է. Հարությունյան*
Սրբագրիչ՝ *Ա Գրիգորյան*
Նկարիչ՝ *Լ. Գոռոշկո*
Համակարգչային ձևավորում՝ *Տ. Կռուկ*

Կյանքի կանոնները («Տրոպինկա» ամսագրի գր.) «Լույս արևելքում»

Գիրքը երեխաներին ծանոթացնում է Տաս Պատվիրանների հետ և կազմված է «Տրոպինկա» ամսագրի տարբեր տարիների հրատարակություններից՝ պատմվածքներից (Ե. Միկուլա), բացատրական նյութերից (Վ. Ցորն) և բանաստեղծություններից (Գ. Վեզիկովա):

Տարրական և միջին տարիքի դպրոցական երեխաների համար:

№ 08.545
ISBN 978-3-944772-22-6
© «Свет на Востоке», 2016.

ՄԱՍ 1

ՈՒԽՏԻ ՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՄԱԿԵՏԸ

Ողջո՛ւյն, Անուլիկ,– բարևեց Դավիթը, նստելով դասասեղանի մոտ: Նկատելով դասընկերուհու կապկպված մատները, հարցրեց,– իսկ ի՞նչ է եղել ձեռքիդ հետ:

– Երեկ վնասեցի:

– Տիկնիկիդ համար շոր էիր ձևու՞մ,– ծիծաղեց Դավիթը:

– Դավիթիկ, համա թե հումոր ունես, հա՛,– վիրավորվեց Անահիտը:

– Իսկ եթե լու՞րջ: Ի՞նչ էիր սարքում:

– Ուխտի տախտակները: Մեզ կիրակնօրյա դպրոցում են հանձնարարել,– պատասխանեց Անահիտը: Տեսնելով, որ Դավիթը չի համբերում, որպեսզի նորից սրամտի, ավելացրեց,– իհարկե, ոչ թե քարից, այլ ստվարաթղթե մակետը:

– Ուխտի տախտակները քարե սալիկներ են, եթե չեմ սխալվում,– ճշտեց Դավիթը,– ես հիշում եմ, որ դրանք Մովսեսն է ստացել Աստծուց՝ սարի վրա:

– Այո,– պատասխանեց Անահիտը, ուրախանալով, որ իր ասածները Դավիթի համար անտեղի չէին եղել, և նա հիշում էր ուխտի տախտակների մասին իր պատմածը: – Միայն ափսոս, որ չկարողացա ավարտել. ստվարաթուղթը շատ հաստ էր, մկրատը դուրս պրծավ և ահա… – Անահիտը կոտրված սրտով փորձեց շարժել փաթաթված մատները:

– Կուզե՞ս դասերից հետո գամ ձեր տուն և օգնեմ կտրատել,– առաջարկեց Դավիթը:

Անահիտը ուրախությամբ համաձայնվեց: Վերջին դասից հետո նրանք գնացին Անահիտենց տուն: Նրա սեղանի վրա դրված էր տախտակների անավարտ մակետը, գունավոր թուղթ, սոսինձ, ֆլոմաստերներ:

– Նայի՛ր,– ասաց Անահիտը,– պետք է այս գծով կտրել, հետո Տաս Պատվիրանները գրել մոխրագույն թղթի վրա, և վրայից կպցնել: Ուզու՞մ ես, դու կտրատիր, իսկ ես տողերը կգծեմ, որոնցով պետք է գրեմ:

Դավիթը սկսեց ժրաջանորեն կտրատել: Ստվարաթուղթը պինդ էր, և Դավիթը տնքում էր մկրատի վրա հենվելով:

– Դժվար աշխատանք է, հա՛,– հոգոց հանեց նա:

– Մովսեսի համար ավելի դժվար էր, չէ՞ որ նա քարից էր կոփում այդ տախտակները,– նկատեց Անահիտը,– փոխարենը, պատվիրաններն Աստված Ինքն էր գրում:

Դավիթը մի կողմ դրեց մկրատը, որպեսզի մի փոքր հանգստանա:

– Իսկ ի՞նչ լեզվով էր Նա գրում պատվիրանները:

Անահիտը մի պահ մտածեց:

– Մովսեսը եբրայեցի էր, ուրեմն, եբրայերեն:

– Լսի՛ր, Անուլիկ, ստացվում է, Աստված միայն հրեաներին տվեց պատվիրանները: Ինչու՞ են այդ դեպքում բոլորը կարծում, որ Աստծո օրենքը պետք է կատարեն և՛ ռուսները, և՛ ֆրանսիացիները, և՛ ամերիկացիները: Չէ՞ որ Սինա լեռան վրա Մովսեսը պատվիրանները ստացավ իր ժողովրդի՝ Իսրայելի համար: Նա Իսրայելի Աստվածն է: Ուրեմն ինչու՞ ենք մենք Նրան անվանում նաև մեր Աստվածը:

– Որովհետև ուրիշ Աստված չկա:

– Ո՞նց թե, չկա: Իսկ հիշու՞մ ես, երբ մենք ուսումնասիրում էինք հին Հունաստանի դիցաբանությունները: Նրանք Օլիմպոս սարի վրա մի կույտ աստվածներ ունեին՝ Զևսը, Ապոլոնը, Աֆրոդիտան: Իսկ Եգիպտոսում պաշտում էին Ռա աստծուն: Սլավոնների մոտ Պերունն էր: Սկանդինավցիների մոտ՝ Օդինը,– սկսեց թվարկել Դավիթը:

– Դրանք իրական աստվածներ չեն,– առարկեց Անահիտը:

– Իսկ ինչպե՞ս կապացուցես,– չէր հանձնվում Դավիթը:

– Դե, լավ: Դու Պերունին տեսե՞լ ես: Դա մի քանդակած փայտե սյուն է:

Դավիթը գլխով արեց:

– Ի՞նչ ես մտածում, Պերունը կկարողանա՞ր ստեղծել երկինքը, երկիրը, կենդանիներին: Իսկ եթե նա մարդուն ստեղծեր իր պատկերով ու նմանությամբ, կուզե՞իր դու նրա նման լինել, Դավիթիկ:

– Չէ՛, չէ՛, Անուլիկ: Ես պարզապես հետաքրքրվեցի: Ես չեմ վիճում, որ Իսրայելի Աստվածը նաև մեր Աստվածն է:

– Պարզապես Իսրայել ժողովրդի միջոցով Նա փոխանցեց այն ամենը, ինչ ուզում էր ասել բոլոր մարդկանց,– ավելացրեց Անահիտը:

Դավիթը ուխտի տախտակներն էր կտրատում ստվարաթղթից և մի կողմ դրեց մկրատը:

– Ես պետք է գնամ: Ես ուզում եմ հասցնել ֆուտբոլ նայել: Եկ, վաղը շարունակենք: Ես կգամ, ու մենք միասին կգրենք պատվիրանները:

– Հրաշալի է,– համաձայնվեց Անահիտը,– շնորհակալություն օգնության համար:

ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏՎԱԾԸ ՄԵՐ ԱՍՏՎԱԾՆ Է

Աստվածաշնչյան պատումը սկսվում է հետևյալ բառերով. *«Սկզբումն Աստուած ստեղծեց երկինքը եւ երկիրը»*: Շարունակելով կարդալ, մենք իմանում ենք, որ Աստված Նոյի ընտանիքը փրկեց ջրհեղեղից: Իսկ Ծննդոց գրքի 12–րդ գլխից սկսած Աստվածաշունչը մեզ պատմում է Աբրահամի մասին: Նրա մասին Աստվածաշնչում շատ է խոսվում: Գիտե՞ս ինչու: Աբրահամի մասին գրված է, որ նա, Աստծուն հավատալով, դարձավ բոլոր հավատացյալների հայրը: Նա, այսպես ասած, Միակ Աստծո հանդեպ հավատի հիմքը դրեց: Եվ Աստված ասաց նրան. *«Եւ երկրի բոլոր ազգերը քո սերունդովը կ՚օրհնուին. նորա համար որ իմ ձայնին ականջ դրիր»* (Ծնն. 22:18): Այն ժամանակ, երբ շրջակա ազգերը երկրպագում էին աստղերին, ոգիներին, կուռքերին, Աբրահամը գիտեր Միակ Աստծուն, պաշտում էր Նրան և հնազանդվում: Աստված Աբրահամին բերեց մի երկիր, որը Նա խոստացավ տալ Աբրահամի սերնդին՝ հրեաներին: Աբրահամի որդին՝ Իսահակը, նույնպես հավատում էր Միակ Աստծուն և ապրում էր Նրա կամքին համապատասխան: Իսահակի որդին՝ Հակոբը, նոր անուն ստացավ՝ Իսրայել: Հակոբի տասներկու որդիներից սերվեցին Իսրայելի տասներկու ցեղերը: Չորս հարյուր տարուց ավելի իսրայելացիներն ապրում էին եգիպտական ստրկության մեջ:

Մովսես անունով մի իսրայելացու Աստված ընտրեց որպես Իսրայել ժողովրդի առաջնորդ: Մովսեսի կանչվելը շատ հետաքրքիր էր: Այդ ժամանակ նա իր աներոջ ոչխարներն էր արածեցնում անապատում՝ Քորեբ լեռան մոտ, երբ Աստված հայտնվեց նրան վառվող, բայց չվերջացող մորենու թփի միջոցով: Մովսեսը որոշեց մոտիկից նայել, թե այդ ինչ հրաշք է և լսեց կրակի միջից եկող Աստծո ձայնը: Աստված Մովսեսին ասաց, որ գնա Եգիպտոս, ազատագրի Իսրայելի ժողովրդին ու տանի այն երկիրը, որ Նա խոստացել էր Աբրահամին: Երբ Աբրահամն Աստծուն հարցրեց, թե Ով է Նա և ինչ է Նրա

անունը, Աստված պատասխանեց. *«Ես եմ, ՈՐ ԵՄ»*: Այսինքն, ի տարբերություն մյուս բոլոր այսպես կոչված աստվածների ու կուռքերի, Նա միշտ եղել է, կա ու կլինի: Ուրիշ աստվածներ պարզապես չկան: Դրա համար էլ Նա առանձնահատուկ անվան կարիք չունի. Նրան մյուսներից կարելի է տարբերել Նրանով, որ Նա գոյություն ունի: Եսայի մարգարեն գրի է առել Նրա խոսքերը. *«Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Թագաւորը, եւ նորա Փրկիչը՝ Զօրաց Տէրը. Ես եմ առաջինը, եւ Ես եմ վերջինը. Եւ ինձանից զոկ Աստուած չ'կայ»* (Եսայի 44:6): Այդ պատճառով Իսրայելի Աստվածը՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը, նաև մեր Աստվածն է, մեր Երկնային Հայրը:

Շատ տարիներ անցան այն օրից, երբ Մովսեսն անապատում հանդիպեց Աստծո հետ: Իսրայելի ժողովուրդը, Տիրոջ զորությամբ ազատագրվելով եգիպտական լծից, անցնելով բազում փորձությունների միջով, վերջապես հասավ այն վայրը, որտեղ մի ժամանակ Աստված հայտնվեց Մովսեսին և կոչ արեց նրան դառնալ Աստծո ժողովրդի առաջնորդը: Այնտեղ իսրայելացիները երկար կանգ առան. Աստված որոշեց նրանց տալ օրենքներ, որոնցով նրանք պետք է ապրեին, որպեսզի չդառնային շրջակա ազգերի նման խուլ հեթանոսներ, ովքեր պաշտում էին փայտե, քարե և մետաղե քանդակներին, և իրենց երեխաներին զոհ էին մատուցում կուռքերի համար: Բացի բազմաթիվ այլ օրենքների, Աստված Մովսեսի միջոցով Իր ժողովրդին տվեց Տաս Պատվիրանները: Տերը դրանք սկսում է հետևյալ ձևով՝

«Ես եմ Եհովան քո Աստուածը՝ որ քեզ Եգիպտոսի երկրիցը ծառայութեան տունիցը հանեցի» (Ելից 20:2):

Տաս Պատվիրանները դարձան Իսրայելի Հիմնական օրենքը, իսկ ժամանակի ընթացքում, նաև ողջ աշխարհի: Այս պատվիրանների մասին ենք մենք խորհելու այս գրքի էջերին:

ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մարդիկ ստեղծել են օրենքներ բազում,
Օրենքի գրքեր, հոդվածներ բազում
Բայց ամենակարևորն է ու անխափան
Աստծո օրենքը անսասան:

Սինայի վրա որոտ էր, կայծակ,
Տիրոջ ներկայության ապացույցը հստակ,
Աստծո ձեռքը տախտակներին ուխտի
Քանդակում էր Կանոնները կյանքի:

Մեծ իմաստ կա այդ մի քանի տողում,
Լավ է, երբ դրանք փոքրուց ենք սովորում՝
Առաջինը՝ ինչպես վերաբերվել Աստծուն,
Երկրորդը՝ ինչպես վերաբերվել մարդուն:

ՄԱՍ 2

ԱՍՏԾՈ ՍԻՐՈՒՅ ՄՂՎԱԾ

Դե, շարունակենք,– առույգ ասաց Դավիթը, հիանալով ուխտի տախտակներով, որոնք նա երեկ էր կտրատել ստվարաթղթից:

– Եկ իմ թուղթը ծալենք երկու մասի, և վրան գրենք առաջին պատվիրանը: Պետք է այնպես հաշվարկել, որ ամբողջը տեղավորվի: Աստվածաշնչում տեքստը երկար է, բայց ուսուցչուհին մեզ թույլ տվեց այն մի փոքր կարճացնել,– ասաց Անահիտը,– ես կկարդամ ամբողջ տեքստը, իսկ հետո կորոշենք, թե ինչպես գրենք:

– «Ես եմ Եհովան քո Աստուածը՝ որ քեզ Եգիպտոսի երկրիցը ծառայութեան տունիցը հանեցի: Բացի ինձանից ուրիշ աստուածներ չ'ունենաս»,– կարդաց Անահիտը:

– Արի, պարզապես գրենք. «Ես եմ քո Աստվածը»,– առաջարկեց Դավիթը:

– Չէ, չի ստացվի,– առարկեց Անահիտը,– պետք է գրել նաև ուրիշ աստվածների մասին, որոնք իրականում աստվածներ չեն: Թե չէ կստացվի, որ ամեն մեկն իր աստվածն ունի:

– Լավ, արի այսպես. «Ես եմ Եհովան քո Աստուածը: Բացի ինձանից ուրիշ աստուածներ չ'ունենաս»,– մտածելով, թելադրեց Դավիթը:

– Հրաշալի է: Հենց այդպես էլ կգրենք,– համաձայնվեց Անահիտը, վերցրեց ֆլոմաստերն ու սկսեց ջանասիրաբար նկարել տառերը:

Դավիթը, Անահիտին հետևելով, Աստվածաշունչն էր թերթում:

– Իսկ ինչու՞ հատկապես այդ պատվիրանն Աստված որոշեց առաջինը գրել քարե տախտակների վրա: Դահի՞նչէ, ամենակարևո՞րն է,– հարցրեց նա Անահիտին,– չէ՞ որ ամենակարևոր բաները սկզբում են գրում:

– Դա իրոք ամենակարևորն է՝ ճանաչել ու սիրել Աստծուն: Իսրայելի ժողովուրդը չէր կարճացնում տեքստը, այլ կարդում էր

Աստծո օրենքն ամբողջությամբ ու միշտ հիշում էր, որ Աստված հանել էր նրանց ստրկությունից,– գրելուց կտրվելով, ասաց Անահիտը,– նրանք դրա համար շատ շնորհակալ էին Նրան և իրենց երեխաներին վաղ մանկությունից սովորեցնում էին սիրել Աստծուն, շնորհակալ լինել Նրան ու հնազանդվել: Իսրայելում օրենքի խոսքերը երգում էին որպես երգեր, և հիմա էլ են երգում:

– Այո, ես մի անգամ մի ֆիլմ տեսա,– հիշեց Դավիթը,– նրանք փողեր էին փչում, իսկ հետո երգում էին: Այդ ֆիլմում նաև ցույց էին տալիս, թե ինչպես էր հայրը փոքրիկ տուփերը, որոնց մեջ օրենքի խոսքերով մագաղաթե թերթիկներ կային, կապում ճակատին և ձեռքին, իսկ նրա փոքրիկ տղան սովորում էր դա:

Անահիտը շարունակում էր գրել, իսկ Դավիթը մտքերի մեջ ընկավ: Հետո հանկարծ ցածր ու լուրջ ասաց:

– Իսկ իմ հայրիկն ինձ ոչ մի անգամ չի պատմել Աստծո մասին: Մայրիկը՝ նույնպես: Միայն տատիկն էր սովորեցնում, որ եթե ես

ինձ վատ պահեմ, Աստված կպատժի: Եվ ես սովորեցի վախենալ Աստծուց: Իսկ պարզվում է, Նրան պետք է սիրել:

Անահիտը մի կողմ դրեց ֆլոմաստերը և լուրջ նայեց Դավիթին:

– Աստված չի ուզում, որ մենք Նրանից վախենանք: Սակայն Նա ուզում է, որ մենք վախենանք Նրան վշտացնել, այսինքն՝ մեղք գործել:

– Իսկ ի՞նչ տարբերություն,– չհասկացավ Դավիթը:

– Աստված սիրում է մեզ, բայց ատում է մեղքը: Եվ մեղքը միշտ իր հետևանքներն ունի: Մեղքը կարող է մարդուն Աստծուց շատ հեռու տանել: Բայց Աստված, սիրուց մղված, միշտ պատրաստ է ընդունել ու ներել մեղավորին,– բացատրեց Անահիտը:

– Իսկ ի՞նչ ես կարծում Անուլիկ… Ես մի ընկեր ունեմ: Նա առանց հարցնելու վերցրել էր իր ավագ եղբոր հեռադիտակը, որպեսզի տեսներ, թե ինչպես է այն կառուցված: Իսկ հետո, չկարողանալով ետ հավաքել, քանդված հեռադիտակը թաքցրել էր ավտոտնակում, իսկ եղբորն ասել էր, որ չգիտի, թե այն որտեղ է… Նա հիմա ի՞նչ պետք է անի: Աստված կների՞ նրան այդ մեղքը: Իսկ ի՞նչ անել այդ հեռադիտակի հետ,– դողդողաց Դավիթի ձայնը:

– Ինձ թվում է, ես ճանաչում եմ այդ «ընկերոջը»,– գլխի ընկավ Անահիտը:

– Այո, դա ես եմ: Եթե ես հեռադիտակի մասին պատմեմ, Գրիշն ինձ կսպանի: Մի՞թե այս իրավիճակում Աստված կարող է օգնել ինձ,– հարցրեց Դավիթը արցունքն աչքերին:

– Աստված ամեն բան կարող է: Դու հիմա Աստծուց ներում և օգնություն խնդրիր, իսկ ես քեզ ինչ–որ մի բան կասեմ:

Դավիթը ցածրաձայն աղոթեց և մաքրեց արցունքները: Անահիտը ժպտաց ու ասաց:

– Բե՛ր հեռադիտակը: Իմ հարևանն աշխատում է մի արհեստանոցում, որտեղ օպտիկական սարքեր են վերանորոգում, նա կօգնի այն նորոգել:

– Ախր, ես փող չունեմ, որ վերանորոգման համար վճարեմ,– առարկեց Դավիթը:

– Բանը նրանում է, որ իմ հարևանը նույնպես ճանաչում և սիրում է Աստծուն: Նա ուրախ կլինի քեզ օգնել,– վստահ ասաց Անահիտը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Գոյություն ունեն փողոցային երթևեկության բազմաթիվ կանոններ: Բոլոր կանոնները գիտեն միայն նրանք, ովքեր վարորդական իրավունքի համար քննություններ են հանձնում: Բայց դրանց մեջ կան գլխավորները, որոնք բոլորը գիտեն: Օրինակ՝ լուսաֆորի կարմիր լույսի տակով անցնելը մահացու վտանգավոր է:

Աստված Իր ժողովրդին շատ պատվիրաններ տվեց, բայց դրանց մեջ կան գլխավորները: Դրանք կարելի է անվանել Սահմանադրություն կամ Աստծո և Նրա Թագավորության Հիմնական Օրենքը: Այսօր, մենք կխոսենք առաջին պատվիրանի մասին: Այն այսպես է հնչում՝

«Ես եմ Եհովան քո Աստուածը՝ որ քեզ Եգիպտոսի երկրիցը ծառայութեան տունիցը հանեցի: Բացի ինձանից ուրիշ աստուածներ չ'ունենաս» (Ելից 20:2–3):

Ինչու՞ Աստված այսպիսի պատվիրան տվեց: Դե, որովհետև միայն Նա է Աստված, իսկ մյուսները՝ ոչ: Եթե մարդիկ ինչ–որ մի բանի պաշտում են որպես աստված, դա դեռ չի նշանակում, որ այն աստված է: Կփորձեմ բացատրել: Դու հայրիկ ու մայրիկ ունես: Մայրիկդ քեզ շատ է սիրում: Նա է քեզ աշխարհ բերել: Դու նրա զավակն ես: Եվ հանկարծ, չգիտես ինչու, քո խելքին փչում է մայրիկիդ այսպես ասել. «Ես կուզենայի, որ իմ մայրիկը մեր կողքի մուտքի Աննա մորաքույրը լիներ: Պատկերացնու՞մ ես, թե ինչ ցավ կապրեր քո մայրիկը:

Կամ մեկ ուրիշ օրինակ: Դու եկել ես դպրոց: Ուրախանում ես, քանի որ հանդիպելու ես քո լավագույն

ընկերոջը: Դուք վաղուց չեք տեսնվել, քանի որ նա իր արձակուրդներն անցակցրել է Ամերիկայում՝ իր բարեկամների մոտ: Դու մոտենում ես դասասենյակի դռանն ու լսում (դու ականջ չէիր դրել, այլ պատահաբար լսեցիր), թե ինչպես է քո ընկերն ինչ–որ մեկին ասում. «Չէ, ես ու Սերգեյը ընկերներ չենք: Մենք պարզապես նույն շենքում ենք ապրում…»: Քո ներսում ամեն բան խառնվում է իրար: Չէ որ դուք միասին կիրակնօրյա դպրոց եք գնացել, և ամառային ճամբարում էլ միասին եք եղել: Քեզ թվում էր, թե նա էլ շուտով հավատացյալ կդառնար: Իսկ նա հիմա ինչե՞ր է խոսում: Դու մտնում ես դասարան ու տեսնում, թե ում հետ է քո ընկերը խոսում: Ախր դա նույն դասարանում մնացած Միշան է, «Ճանճ» մականունով: Նա և օղի՛ է խմում, և ծխու՛մ, ու այնպես է հայհոյում, որ լսելն անգամ ամոթ է: Եվ դու այնպիսի ցավ ապրեցիր, որ քո ընկերը, որին դու միայն բարիք էիր ցանկանում, այնպիսի ընկեր է ընտրել, որը նրան ուղիղ բանտ կտանի:

Կամ մեկ այլ օրինակ: Դու սիրահարված եղե՞լ ես: Դու ուզում էիր, որ նա միշտ քո կողքին լինի, զրուցի քեզ հետ, դասերից հետո քեզ հետ միասին տուն գնա… Մի խոսքով, որպեսզի նրա համար դու միակը լինեիր: Սերը բացառում է մյուս բոլորին: Մենք այդպես ենք ստեղծված:

Միայն մեկ Աստված կա: Նա, Ով ստեղծել է ամբողջ աշխարհը. Նա, Ով Իր Միածին Որդուն ուղարկեց այս աշխարհ, որպեսզի Նրա միջոցով մենք բոլորս փրկվենք. Նա, Ով արել է ամեն բան, որպեսզի մենք երջանիկ լինենք և՛ այս կյանքում, և՛ ապագա՝ հավիտենական կյանքում: Աստված մեզ շատ է սիրում: Նա ուզում է, որ մենք էլ Իրեն սիրենք: Միայն Նա կարող է մեզ չարից պահել, Նա է միայն ի վիճակի փրկելու և օրհնելու մեզ: Դրա համար Նա ասում է. *«Բացի ինձանից ուրիշ աստուածներ չ'ունենաս»:*

ՔՈ ՏԵՐ ԱՍՏՎԱԾԸ

Հիմնականն ասվեց սկզբում,
Տախտակների առաջին տողերում,
Որպեսզի դու իմանաս հաստատը.
«Ես եմ քո Տեր Աստվածը…»

Երկրի վրա շատ բան է պետք երջանկության համար՝
Տուն, ընտանիք, խմորեղեն՝ տոնի համար,
Խաղեր, գրքեր, անկեղծ ընկերություն,
Բայց քո Տեր Աստվածը՝ ամենասկզբում:

Քանի որ արևը պարզ երկնքում,
Աստղերը, որ կայծկլտում են հեռվում,
Եվ երգեցիկ թռչնակի շունչը
Մեր Տերը պահում է Իր ձեռքում:

Որովհետև այնտեղ ողջ Տիեզերքի սիրտն է,
Որտեղ Աստծո հավերժական գահն է,
Եվ նա է միայն պայծառ ու ներշնչված ապրում,
Ով իր անձնական Փրկչին է Նրա մեջ գտնում:

Սիրով հավատարիմ ու հաստատ
Աշխարհին վաղուց է սիրել Աստված:
Եվ երբ դժվար ու ցավոտ է մեզ համար,
Դա միևնույնը չէ Նրա համար:

Աստծուն ոչինչ չի կարող փոխարինել,
Աշխարհն ավելի լավ բան չի կարող առաջարկել,
Քան քո գիտակցված դավանանքն անկասկած.
«Իմ Տեր և Աստված»:

ՄԱՍ 3

ԿՈՒՌՔԵՐ

Ինչպե՞ս են գործերդ, Դավիթիկ,– հարցրեց Անահիտը Դավիթին, որն սպասում էր նրան դասարանի մուտքի մոտ,– վերադարձրի՞ր հեռադիտակը Գրիշին:

– Այո, տվեցի: Գիտե՞ս, Անուլիկ, ես սկզբում ուզում էի թաքուն տեղը դնել, բայց հետո որոշեցի ու պատմեցի ամեն բան այնպես, ինչպես եղել էր:

– Եվ ի՞նչ ասաց Գրիշան:

– Նա սկզբում բարկացավ, հետո ստուգեց, արդյոք հեռադիտակի հետ ամեն բան կարգին է, ու հանգստացավ:

– Ուրեմն, հրաշալի է,– ժպտաց Անահիտը:

– Ոչ այնքան: Հետո նա սկսեց ծիծաղել ինձ վրա: Ասում է. «Վերջ, ախպերս, հիմա արդեն Աստծո արձանը սարքիր քեզ համար, ու երկրպագիր»: Արդյունքում, մենք նորից վիճեցինք,– վշտացած ասաց Դավիթը:

Այդ պահին զանգը տվեց, և Անահիտը առաջարկեց.

– Դասերից հետո՝ մեր տուն: Ես ուխտի տախտակների մակետը պիտի սարքեմ, այդ ժամանակ էլ կխոսենք Աստծո արձանների ու տարբեր պատկերների մասին: Դա հենց երկրորդ պատվիրանն է:

Դասերն աննկատ թռան, ու շուտով երկու ընկերները նստած էին Անահիտենց գրասեղանի մոտ:

– Նայի՛ր, ահա երկրորդ պատվիրանը. *«Քեզ համար կուռք չ՚շինես, եւ ոչ վերը երկնքումը՝ կամ ցածը երկրի վերայ՝ կամ երկրի տակի ջրերումը եղած բաների մէկ նմանութիւնը. Նորանց երկրպագութիւն չ՚անես, եւ նորանց չ՚պաշտես»:* Մեր տախտակի վրա կգրենք այսպես. «Կուռք մի՛ սարքիր ու մի՛ երկրպագիր նրան»,– ասաց Անահիտը, տեղադրելով թուղթը, որի վրա արդեն գրված էր առաջին պատվիրանը, և սկսեց նկարել երկրորդ պատվիրանի տառերը,– ես կգրեմ ու կպատմեմ: Հիշու՞մ ես, մենք կարդում էինք,



թե ինչպես Մովսեսը Սինա լեռից վերադարձավ ժողովրդի մոտ՝ ուխտի տախտակները ձեռքին:

–Հիշում եմ,– ասաց Դավիթը,– ժողովուրդն այդ ժամանակ երկրպագում էր ոսկե հորթին, որ մարդիկ իրենց ձեռքով էին սարքել: Մովսեսը բարկացավ և կոտրատեց ուխտի տախտակները: Ինչպե՞ս կարող էին նրանք այդպիսի բան անել: Չէ որ Աստված հենց նոր այնպիսի հրաշքներ էր ցույց տվել նրանց: Ինչու՞ նրանք այդպես վարվեցին: Չէ՞ որ դա հիմարություն է. երկրպագել հորթին,

թեկուզև ոսկե:

Անահիտը մի պահ գործից կտրվեց:

– Գիտե՞ս, դա ոչ միայն հիմարություն է: Դա սարսափելի է, քանի որ յուրաքանչյուր կուռքի (այդպես է կոչվում որևէ աստվածության պատկերը) ետեևում կանգնած է Աստծո թշնամին՝ սատանան:

Դավիթը կծկվեց՝

– Ո՞նց թե:

– Փառքն ու երկրպագությունը պետք է պատկանեն միայն Աստծուն, քանի որ միայն Աստված է սուրբ, այլ ոչ թե նրա համար, որ Նա կարիք ունի երկրպագության կամ փառքի: Այդպես պահանջում է արդարությունը՝ փառքի և երկրպագության արժանի է միայն Կատարելությունը: Եվ Աստծո որևէ պատկեր, անգամ շատ գեղեցիկ, ընդամենը պատկեր է: Ոչ մի պատկեր չի կարող ներկայացնել Աստծո ողջ մեծությունը, կարողությունն ու գեղեցկությունը:

– Այ քեզ բա՛ն: Իսկ ի՞նչ անել, եթե ես հեռուստացույցով բռնցքամարտ եմ նայում և հավանում եմ Վիկ Դարչինյանին: Չէ՞ որ մարզիկներին ու արտիստներին նույնպես երբեմն կուռք են անվանում: Ծափահարում են նրանց, բարձրաձայն վանկարկում… – շփոթվեց Դավիթը:

– Ամեն ինչ չափի մեջ է լավ: Նորմալ է, եթե դու հավանում ես որևէ մարզիկի, կամ քեզ դուր է գալիս որևէ մեկի գեղեցիկ երգեցողությունը, բայց եթե դու քո սենյակի պատերով մեկ նրանց նկարները կպցնես ու ամեն բանում փորձես կնրկնօրինակել նրանց, դա արդեն լավ չէ: Չէ՞ որ նրանք էլ սովորական մարդիկ են: Ուժեղ են, գեղեցիկ, տաղանդավոր, բայց մարդիկ են, ու նաև անկատար են: Կա Մեկը, Ումից մենք կարող ենք օրինակ վերցնել: Աստված մեզ ցույց տվեց Կատարելությունը՝ Հիսուս Քրիստոսին: Իսկ կրկնօրինակել մարդկանց, անգամ ամենաճանաչված մարզիկին, նույնն է, ինչ երկրպագել ոսկե հորթին,– ժպտաց Անահիտը,– Կարելի է նրանցից մի լավ բան սովորել, բայց ոչ թէ նրանցից կուռքեր սարքել:

– Այո, ես հասկացա,– ասաց Դավիթը,– հենց այսօր պատից կհանեմ Վիկ Դարչինյանի նկարը:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Եկեք Ելից գրքում կարդանք Աստծո՝ Իր ժողովրդին տված երկրորդ պատվիրանը

«Բացի ինձանից ուրիշ աստուածներ չ՚ունենաս: Քեզ համար կուռք չ՚շինես, եւ ոչ վերը երկնքումը՝ կամ ցածը երկրի վերայ՝ կամ երկրի տակի ջրերումը եղած բաների մէկ նմանութիւնը. Նորանց երկրպագութիւն չ՚անես, եւ նորանց չ՚պաշտես. Որովհետեւ Ես քո Եհովայ Աստուածը նախանձոտ Աստուած եմ, որ կ՚հատուցանեմ հայրերի անօրէնութիւնը որդիների վերայ՝ մինչեւ նորանց երրորդ ու չորրորդ ազգը որ ատում են Ինձ: Եւ կ՚ողորմեմ նորանց մինչեւ հազար ազգը, որ սիրում են Ինձ եւ Իմ պատուիրանքները պահում» (Ելից 20:4–6):

Շատ մարդիկ ասում են, որ պատկերներն արվում են այն բանի համար, որ մարդիկ ավելի հեշտ պատկերացնեն Աստծուն: Նրանք Աստծուն նկարում են, քանդակում փայտից կամ քարից այնպիսին, ինչպիսին պատկերացնում են իրենց երևակայության մեջ: Բայց մարդկային երևակայությունը շատ անվստահելի է այդպիսի կարևոր հարցում: Ահա թե ինչու են շատ ազգեր բռնել կուռքերին երկրպագելու սխալ ճանապարհը: Աստվածարգելում է երկրպագել պատկերներին, եթե անգամ դրանք գեղեցիկ են: Դա կարևոր պատվիրան է: Աստված կամենում է յուրաքանչյուր հավատացյալի հետ անձնական փոխհարաբերություն ունենալ, հպվել ամեն մի մարդու սրտին ու լսել Իրեն ուղղված մարդկանց աղոթքները: Ինչպե՞ս կարող է Տեր Աստված լսել մարդու աղոթքը, երբ նա աղոթում է մի պատկերի, եթե Ինքն է դա արգելել:

Որոշ մարդիկ գտնում են, որ կան հատուկ սուրբ վայրեր, որտեղ Աստծուն երկրպագելն ավելի լավ է: Հովհաննեսի Ավետարանի 4–րդ գլխում մի հետաքրքիր դեպք կա նկարագրված. Հիսուսը խոսում է մի կնոջ հետ, որ Սամարիայից էր: Հասկանալով, որ Հիսուսը սովորական մարդ չէ, նա հարց է տալիս, որի շուրջ այդ ժամանակներում շատ վիճաբանություններ կային. «Մեր քահանաներն ասում են, որ պետք է երկրպագել ա՛յ այն սարի վրա: Իսկ հրեաներն ասում են, որ միայն Երուսաղեմում, տաճարում կարելի է ճշմարտապես երկրպագել Աստծուն»: Հիսուսը նրան պատասխանեց, որ կգա ժամանակ, որ ոչ այդ սարի վրա, ոչ էլ Երուսաղեմում մարդիկ կերկրպագեն Աստծուն, քանի որ ոչ այնքան կարևոր է «որտեղ», այլ՝ «ինչպես»: Նա ասաց, որ Աստված Իր համար փնտրում է այնպիսի երկրպագուներ, որոնք Իրեն կերկրպագեն հոգով և ճշմարտությամբ:

Երբ Իսրայելի ժողովուրդը դուրս էր եկել Եգիպտոսից, կանգառներից մեկի ժամանակ նրանց վրա օձեր հարձակվեցին: Շատ մարդիկ մահացան դրանց խայթոցներից: Այդ ժամանակ Մովսեսն Աստծուն խնդրեց պաշտպանել Իր ժողովրդին: Աստված նրան պատվիրեց պղնձից օձ պատրաստել և ձողի վրա վեր խոյացնել իսրայելացիների բնակավայրի մեջտեղում: Խայթված մարդը կարող էր նայել այդ օձին և բժշկվել: Մովսեսն այդպես էլ արեց: Եվ այլևս ոչ ոքի մահ չէր սպառնում, եթե նրան օձը կծեր. Պետք է նայել պղնձե օձին ու կլավանար:

Իսկ ի՞նչ արեցին իսրայելացիները, երբ եկան իրենց երկիրը: Նրանք այդ պղնձե օձին անվանեցին Նէեսթան և խնկարկում էին դրան այնքան ժամանակ, մինչև իշխանության եկավ աստվածապաշտ թագավոր Եզեկիան և ջարդ ու փշուր արեց այդ կուռքը: Աստվածաշունչն ասում է, որ նա շատ լավ արեց (Դ Թագ. 18):

Այսպիսով, երկրորդ պատվիրանն ասում է, որ մենք ամբողջ սրտով ու ամբողջ մտքով փնտրենք Աստծուն և միայն Նրանք հնազանդվենք ամեն ինչում, ինչ Նա մեզ ասում է:

ՄԻ՛ ԵՐԿՐՊԱԳԻՐ ԿՈՒՌՔԵՐԻՆ

Հեթանոս ազգերը վախենում են,
Իսրայելի Աստծուց դողդողում են,
Բայց հնարավոր չէ Նրան վրանում թաքցնել
Եվ կարիքի դեպքում միայն օգտագործել:

Հնարավոր չէ Նրան տեղավորել,
Կուռքի փայտյա իրանի մեջ դնել,
Ձուլել որպես մի արձան ոսկուց
Որին մարդիկ փափագում են վաղուց:

Իսրայելի Աստվածն ուրիշ է,
Արդար, հավիտենական ու սիրող է,
Եվ կանչել Նրան կարող են բոլորը՝
Թե թագավորը, թե բանվորը:

Տերն արգելել է կտրականապես,
Երկրպագել պատկերներին պես–պես,
Եվ Իր պատվիրանները Նա տվել է
Ճիշտ պաշտամունքի համար Նա կարգադրել է:

Աստված Հոգի է, դրա համար է պատվիրել
Հոգով և ճշմարտությամբ Իրեն երկրպագել,
Եվ օրհնություն Նրանից կառնես,
Եթե Նրան անկեղծ դու ծառայես:

ՄԱՍ 4

ՄԻԱՅՆ ԳԵՂԵՑԻԿ ԽՈՍՔԵՐ

Անահիտ, ես ընդյանրապես չեմ հասկանում երրորդ պատվիրանը,– հենց շեմից հայտարարեց Դավիթը, երբ Անահիտը նրա համար բացեց դուռը:

– Նե՛րս արի, Դավիթ, հիմա կպարզաբանենք,– ներս հրավիրեց Անահիտը իր համադասարանցուն:

– Երեկ ես ամբողջ օրը մտածում էի, այսօր՝ նույնպես, և միևնույն է, ոչինչ չհասկացա,– կոտրված արտաբերեց Դավիթը ու բացեց Աստվածաշունչը,– ահա թե ինչպես է գրված այստեղ. *«Քո Եհովայ Աստուծոյ անունը դարտակ տեղը չ'յիշես, որովհետեւ Եհովան՝ Իր անունը դարտակ տեղը յիշողին անպատիժ չի թողիլ»:* Բացատրիր ինձ, ինչպե՞ս կարելի է Աստծո անունը դատարկ տեղը հիշատակել:

– Ինձ թվում է,– պատասխանեց Անահիտը,– որ մարդ այն ժամանակ է դատարկ տեղը տալիս Տիրոջ անունը, երբ այն նրա համար արժեք չունի: Նա խոսում է Աստծո մասին, և միգուցե լավ բան է ասում, բայց սրտում Աստծո հանդեպ սեր չկա, Նրա հանդեպ երախտագիտություն չկա:

– Իսկ ինչ է, այդպես հնարավո՞ր է,– զարմացավ Դավիթը:

– Իհարկե, օրինակ, մարդը հայտարարում է, որ ինքը հավատացյալ է, սակայն Սուրբ Գիրք չի կարդում և չի աղոթում, իսկ Տիրոջ մասին էլ ոչինչ չգիտի: Ահա և ստացվում է, որ նրա խոսքերը Տիրոջ մասին դատարկ են: Դրանք ընդամենը խոսքեր են, ոչ թե իսկական հավատ, որը մեզ Աստծո հետ է մեկացնում:

– Շնորհակալություն, Անահիտ, թե չէ ես էլ վախեցել էի. միգուցե ես էլ եմ անտեղի օգտագործում Տիրոջ անունը: Թեկուզ ես վերջերս եմ սկսել Աստվածաշունչ կարդալ և աղոթել, ճիշտ է, ոչ այնքան հաճախ, ինչքան դու, սակայն ես վստահ գիտեմ, որ ես նույնպես հավատացյալ եմ,– թեթևացած շունչ քաշեց Դավիթը:

– Գիտե՞ս, Դավիթիկ, լինում է նաև այսպես. օրինակ, երեխան տեսնում է, թե ինչպես են իր ընկերները, կամ հավատացյալ ծնողներն աղոթում, եկեղեցում քարոզներ է լսում, նրան դուր է գալիս կիրակնօրյա դպրոցում ճիշտ պատասխաններ տալ ուսուցչի հարցերին: Դե նա էլ խոսում է Տիրոջ մասին, բարձրաձայն աղոթում է, իրեն հավատացյալ է կոչում, իսկ սրտում՝ դատարկություն է,– մի փոքր լռելուց հետո, ասաց Անահիտը:

– Դու ինձ լրիվ շփոթեցրի՛ր: Հիմա ես ո՞նց կողմնորոշվեմ. խախտում եմ ես այս պատվիրանը, թե՞ չէ,– վշտացած արտաբերեց Դավիթը:

– Ինձ թվում է, որ անգամ անկեղծ հավատացյալներից շատերը կարող են խախտել այս պատվիրանը. կարող են մի բան խոստանալ Աստծուն և չանել: Հանուն գեղեցիկ խոսքերի կարող են մի բան ասել, որ նրանց վրա չի էլ ազդել, օրինակ. «Փա՛ռք Աստծո», քանի որ այդպես է ընդունված: Կարող են աղոթել, պարզապես անգիր արած բառեր արտասանելով, այլ ոչ թե այն, ինչ նրանց սրտում է,– մտածկոտ ասաց Անահիտը ու կարմրեց,– ես ինքս էլ եմ երբեմն այդպես վարվում:

– Դու՞: Չի՛ կարող պատահել: Ինձ թվում է, դու ընդհանրապես չես մեղանչում,– զարմացավ Դավիթը:

– Ի՞նչ ես ասում: Մեղանչում եմ, և այն էլ՝ հաճախ:

– Ուրեմն ի՞նչ, ստացվում է, Աստված այնպիսի պատվիրաններ է տվել, որոնք հնարավոր չէ կատարել,– հարցրեց Դավիթը:

– Այդ պատվիրանները մեզ ասում են այն մասին, թե ինչպիսին է մեր Տերը: Աստծո օրենքը սուրբ է և կատարյալ: Աստված այն տվել է Իր ժողովրդին, որպեսզի նրանք ձգտեն սրբության ու կատարելության:

– Իսկ եղե՞լ են մարդիկ, որոնք կարողացել են ամբողջությամբ կատարել պատվիրանները,– հարցրեց Դավիթը:

– Ոչ, ոչ մի մարդ չի կարողացել կատարել բոլոր պատվիրանները: Միայն Տեր Հիսուս Քրիստոսը:

– Ստացվում է, որ Հին Ուխտի ժամանակներում ոչ մի մարդ չի կարողացել ամբողջության հաճեցնել Աստծուն,–չէր հանգստանում Դավիթը:

–Հին Ուխտի ժամանակներում մարդիկ կարող էին մեղքի համար զոհ անել: Նրանք կարող էին գնալ տաճար, որտեղ նրանց

համար կարող էր աղոթել քահանան: Նրանք իրենք էլ աղոթում էին, և Աստված ներում էր նրանց: Մենք ապրում ենք Նոր Ուխտի ժամանակներում, եթե մենք պատվիրաններից մեկը խախտենք, մենք կարիք չունենք զոհեր մատուցելու, քանի որ Հիսուս Քրիստոսն է զոհը մեր մեղքերի համար: Մենք կարող ենք աղոթքի մեջ ներում խնդրել Տիրոջից, և Նա կների մեզ:

– Ուրեմն ինչ, մենք կարիք չունե՞նք կատարելու այդ պատվիրանները,– հարցրեց Դավիթը:

– Աստված նայում է մեր սրտին: Եթե դու իրոք սիրում ես Տիրոջը, ապա դու կուզենաս հնազանդ լինել Նրան և կփորձես կատարել Նրա պատվիրանները: Իսկ եթե դու կարծում ես, որ դու կարող ես ապրել ինչպես ուզում ես, քանի որ Հիսուսն ամեն բան արել է քո փոխարեն, ապա դու…

– Դատարկ տեղը հիշատակած կլինեմ Տիրոջ անունը,– ավարտեց Դավիթը:

Շա՛տ ճիշտ է: Դու ճիշտ ես, Դավիթ,– ժպտաց Անահիտը:

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Դու հիշու՞մ ես, թե ինչպես Աստված Մովսեսին տվեց օրենքը՝ Տաս Պատվիրանները: Մովսեսը քառասուն օր ու գիշեր սարի վրա էր և հաղորդակցվում էր Աստծո հետ: Եվ Աստված Իր ձեռքով քարե տախտակների վրա գրեց ամենահիմնական պատվիրանները, որոնցով Նա հստակեցնում էր Իր փոխհարաբերությունը մարդկանց հետ: Եվ ահա Նա գրում է առաջին պատվիրանը, երկրորդը, իսկ հետո … երրորդը՝

«Քո Եհովայ Աստուծոյ անունը դարտակ տեղը չ՚յիշես, որովհետեւ Եհովան՝ Իր անունը դարտակ տեղը յիշողին անպատիժ չի թողիր» (Ելից 20:7):

Ի՞նչ է իրենից ներկայացնում այս պատվիրանը, և ինչո՞վ է այն կարևոր: Դու հիշու՞մ ես, թե ինչպես Աստված Մովսեսին կանչեց՝ դառնալ Իսրայել ժողովրդի առաջնորդը: Այդ ժամանակ Մովսեսը հարցրեց. «Ի՞նչ է Քո անունը: Ի՞նչ ասեմ ես, երբ ինձ հարցնեն, թե ով է ինձ ուղարկել»: Աստված այդ ժամանակ ասաց. «Ասա՛ նրանց, որ Ես Եմ–ն է (եբրայերեն Աստվածաշնչում գրված է «Յահվե», իսկ որոշ Աստվածաշնչերում՝ «Եհովա») ինձ ուղարկել»: Այսինքն՝ Աստծո անունը Ես Եմ է՝ Ամենագոյ: Իսկ մյուս, այսպես կոչված, աստվածները գոյություն չունեն: Իսկ մեր Աստվածը գոյություն ունի:

Երբ մենք ինչ–որ մեկին ապավինում ենք, մենք օգտվում ենք ենք նրա հեղինակությունից, նրա անունից: Եթե դու մեծ եղբայր ունես, ապա ընդմիջման ժամանակ

ամեն մեկը չէ, որ կնեղացնի քեզ, այդպես չէ՞: Իսկ եթե մեկը փորձի էլ, դու կարող ես ասել. «Զգույշ եղիր, թե չէ մեծ եղբորս կասեմ, իսկ նա կարատե է պարապում»: Ու մեկ էլ կտեսնես, գոլորշու պես ցրվեցին: Բայց դու հո չես կարող ամեն ընդմիջման ժամանակ ու ամենուրեք եղբորդ վրա հույս դնել: Եվ հատկապես, եթե դու ճիշտ չես: Դու չես կարող նեղացնել մյուսներին, քանի որ դու մեծ եղբայր ունես: Հենց դա էլ ի նկատի ունի երրորդ պատվիրանը: Դու չպետք է տեղի անտեղի ասես «Աստված վկա է», այսինքն՝ երդվես Նրա անունով: Դու չպետք է ասես. «Աստված գիտի, որ ես այսինչ կամ այնինչ բանը ճիշտ եմ արել», թեև ինքդ էլ գիտես, որ սխալվել ես:

Մեր Աստծո անունը պետք է տալ մեծ երկյուղածությամբ ու հարգանքով. Աստվածաշնչում դա կոչվում է Աստծո վախ: Եվ երբ մենք աղոթում ենք, պետք է դա գիտակցաբար անենք, ոչ թե շարունակ «Տե՛ր, Տե՛ր» ասենք: Հիսուսը զգուշացնում է, որ ոչ թե ամեն ով որ «Տե՛ր, Տե՛ր» է ասում կմտնի Երկնքի Արքայություն:

Պատկերացրու, որ դու խոսում ես քո ընկերոջ հետ, որին ամեն օր տեսնում ես: Նրա անունը, ասենք, Հովհաննես է: Եվ դու, նրա հետ խոսելիս, շարունակ կրկնում ես. «Հովո, լսում ես, արի գնանք դուրս: Հովո, իսկ դու, Հովո, դու էլ ես այդ գիրքը կարդացե՞լ, հը՞, Հովո»: Դա անհարգալից է: Մեր Աստվածն ուզում է, որ մենք միշտ զրուցենք Իր հետ, սակայն Նրա անունն անիմաստ չարտասանենք, անտեղի Նրա անունով չերդվենք, այսինքն՝ դատարկ տեղը չօգտագործենք: Դրա համար Նա, մեզ սիրելով, և ցանկանալով միշտ լսել մեր աղոթքները, տվել է մեզ այս կարևոր պատվիրանը. «Քո Եհովայ Աստուծոյ անունը դարտակ տեղը չ՚յիշես»:

ԽԻՍՏ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Երրորդ պատվիրանը խիստ ասում է,
Իշխանությամբ զգուշացնում է.
«Չհամարձակվե՛ք Աստծո անունը պղծել
Եվ դատարկ տեղն այն օգտագործել,

Օգտագործել երդումներում ու վեճերում,
Ընկերների հետ դատարկ խոսակցություններում,
Ապա թե ոչ՝ շատ արագ ձեզ կհասնի
Աստծո խիստ պատիժը ձեզ կգտնի»:

Մեր Աստվածը մեծ է, տիեզերքի Տիրակալ:
Մարդիկ չեն կարող որևէ բանով պարծենալ,
Մեծ ու փոքր պետք է միաբանվեն
Եվ Նրա մեծության առջև խոնարհվեն:

Քանի դեռ ապրում ենք աշխարհում,
Շատ անգամ ենք մեղանչում,
Աստծո սուրբ անունը հարգեք
Եվ զգուշությամբ այն օգտագործեք:

Իսկ ամպերից այն կողմ՝ Երկնքում,
Կստանանք իրավունք նստել Նրա կողքին,
Մեր աչքերով տեսնել Նրա մեծությունը,
Անվերջ փառքն ու գեղեցկությունը:

ՄԱՍ 5

ՏՈՆ

Անահիտն ու Դավիթը պայմանավորվեցին ուխտի տախտակների վրա աշխատանքը շարունակել շաբաթ օրը: Լսելով դռան զանգը, Անահիտը վազեց բացելու: Շեմին կանգնած էր ժպտադեմ Դավիթը, ձեռքին թղթե մի փաթեթ:

– Բարև, Դավիթ,– ողջունեց Անահիտը,– դու այսօր արտասովոր ուրախ ես: Իսկ այդ ի՞նչ ես բերել:

– Խմորեղեն է, իմ սիրածը:

– Իսկ ի՞նչ է, այսօր ինչ–որ տո՞ն է,– հետաքրքրվեց Անահիտը:

– Չէ, հենց այնպես: Մայրիկն ազատ օրերին միշտ ինչ–որ համով բան է Պատրաստում:

– Շատ լավ, ներս արի: Ես հիմա թեյ կդնեմ:

– Արի սկզբում գործն անենք, իսկ հետո՝ կանցնենք խմորեղենին,– առաջարկեց Դավիթը:

Այդպես էլ արեցին: Անահիտը սեղանի վրա դասավորեց ստվարաթուղթը, ֆլոմաստերներն ու թղթերը:

– Այսպիսով, այսօր չորրորդ պատվիրանն է՝ շաբաթվա մասին,– ասաց Մաշան, բացելով Աստվածաշունչը:

– Իսկը թեմայով է: Հիմա կիմանանք, կարելի՞ է շաբաթ օրով խմորեղեն ուտել:

Անահիտը կարդաց. *«Յիշիր հանգստութեան օրը նորան սուրբ պահելու համար: Վեց օր աշխատիր եւ քո բոլոր գործն արա. Բայց եօթներորդ օրը՝ քո Եհովայ Աստուծոյ հանգստութեան օր է. Ոչ մի գործ չ'գործես, ոչ դու, ոչ քո որդին՝ ոչ քո աղջիկը, ոչ քո ծառան ու աղախինը՝ ոչ քո անասունը՝ ոչ էլ քո դռան օտարականը: Որովհետեւ Եհովան վեց օրուայ մէջ արաւ երկինքն ու երկիրը՝ ծովն ու բոլոր նորանց մէջ եղածները, եւ եօթներորդ օրը հանգստացաւ. Նորա համար Եհովան օրհնեց հանգստութեան օրը եւ սրբեց նորան»:*

– Փաստորեն, Անուլիկ, ստացվում է, որ մենք չենք կարող այսօր ուխտի տախտակները պատրաստել: Դասերն էլ չի կարելի անել: Մայրիկին էլ չի կարելի օգնել: Ահա և ստացվում է, որ կարելի է միայն խմորեղենով թեյ խմել,– վհատված եզրակացրեց Դավիթը:

– Դա այնքան էլ այդպես չէ,– առարկեց Անահիտը,– Հիսուսն Ինքը շաբաթ օրով բարի գործեր էր կատարում: Մի անգամ Նա բժշկեց մի մարդու, ում ձեռքը չէր աշխատում: Իսկ երբ Նրան սկսեցին մեղադրել այն բանի համար, որ խախտում է չորրորդ պատվիրանը, ահա թե ինչ պատասխանեց նրանց Քրիստոսը,– Անահիտը թերթեց Աստվածաշունչն ու բացեց Մատթեոս Ավետարանը 12–րդ գլուխը. *«Ո՞վ կ՚լինի ձեզանից այն մարդը, որ մէկ ոչխար ունենայ, եւ եթէ նա շաբաթ օրը ընկնի փոսի մէջ, մի՞թէ չի բռնիլ նորան եւ վեր հանիլ: Ապա ո՞րքան առաւել է մարդը ոչխարից. Ապա ուրեմն արժան է շաբաթ օրը բարիք գործել»:*

– Պարզ է,– ասաց Դավիթը,– ոչխարին կարելի է փրկել: Իսկ գորգերը փոշեկուլով մաքրել կարելի՞ է: Միգուցե, ավելի լավ է կիրակի օ՞րը անել: Սակայն կիրակի օրը ես ուզում էի քեզ հետ եկեղեցի գնալ: Հիմա ի՞նչ անեմ:

– Հասկանու՞մ ես, Դավիթ, Աստված այս պատվիրանը տվեց Իր ժողովրդին, որպեսզի նրանք վեց օր նվիրեն աշխատանքին, իսկ մեկ օրը՝ Աստծուն: Իսրայելում շաբաթը՝ շաբաթվա վեցերորդ օրն է, հանգստի օրը: Շաբաթ օրը ժողովարաններում պաշտամունքներ են տեղի ունենում: Իսկ մեզ՝ քրիստոնյաներիս մոտ, պաշտամունքները տեղի են ունենում կիրակի օրերը, քանի որ մեզ մոտ կիրակին է հանգստյան օր համարվում: Այնպես որ մենք կիրակին ենք նվիրաբերում Տիրոջը: Եվ ես կարծում եմ, որ ավելի լավ է օրն այնպես կազմակերպել, որ ստիպված չլինես կիրակի օրով փոշեկուլ անես, աշխատես պարտեզում կամ այգում: Հասկանու՞մ ես:

– Իսկ եթե, հանկարծ, կիրակի օրով մայրիկը խնդրի օգնել՝ ամանները լվանալ: Ի՞նչ անել, չլվանա՞լ:

– Իհարկե լվանալ,– պատասխանեց Անահիտը:

– Համարենք, թե մի ոչխար է փոսն ընկել,– ծիծաղեց Դավիթը:

– Այո: Տերն ասաց, որ բարիք կարելի է գործել բոլոր օրերին:

– Մենք տախտակի վրա այսպես կգրենք. «Հիշի՛ր վեցերորդ օրը, որպեսզի այն սուրբ պահես: Վեց օր աշխատի՛ր… իսկ յոթերորդ օրը՝ շաբաթը՝ քո Տեր Աստծունն է»,– առաջարկեց Դավիթը:

Թղթի վրա գրելով չորորդ պատվիրանը, Անահիտը սեղանից հավաքեց ուխտի տախտակները: Այնուհետև նա բերեց թեյնիկն ու բաժակները և կտրատեց խմորեղենը:

– Օ՛, ինչ համեղ է,– գովեց Անահիտը,– կարծես տոն լինի:

– Շաբա՛թ է,– ժպտաց Դավիթը:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Ո՞ր օրվա համար ես դու ամենաշատն ուրախանում: Երբ ես փոքր էի, ամենաշատն ուրախանում էի կիրակի օրվա համար: Այդ օրը մայրիկը միշտ հաց և խմորեղեն էր թխում: Իմ ծնողները շատ խիստ էին պահում հանգստի օրը: Նրանք ասում էին, որ Աստված Ինքն է պատվիրել վեց օր աշխատել (կամ սովորել), իսկ յոթերորդ օրը հանգստանալ: Այդ պատվիրանը գրված է Աստվածաշնչում.

«Յիշիր հանգստութեան օրը նորան սուրբ պահելու համար...» (Ելից 20:8):

Երբ ես արթնանում էի, տեսնում էի մորս՝ խոհանուցում, իսկ հորս՝ հյուրասենյակում՝ Սուրբ Գիրք կարդալիս: Մենք գիտեինք, որ նախաճաշից հետո գնալու ենք պաշտամունքի Կարագանդա, որը մի մեծ քաղաք էր և գտնվում էր մեր հանքափորների գյուղակից ոչ շատ հեռու: Պաշտամունքի ժամանակ մենք լսում էինք երգչախմբի հանդիսավոր երգեցողությունը և նաև քարոզներ: Եկեղեցին լեփ–լեցուն էր լինում մարդկանցով, այնպես որ մեզ համար երբեմն ներսում տեղ չէր լինում: Ճաշին մենք վերադառնում էինք տուն, և որպես կանոն, միշտ հյուրեր էինք ունենում: Ճաշից հետո հայրիկս ու հյուրերը երգում էին, Աստվածաշունչ էին կարդում ու ինչ–որ բանի շուրջ ջերմեռանդ վիճաբանում էին:

Ես գիտեի, որ նրանք քննարկում են այն, ինչ կարդացել էին Սուրբ Գրքում, բայց նրանց քննարկումները չէի հասկանում և զբաղվում էի իմ գործերով՝ նկարում էի, խաղում, գրքեր կարդում: Երեկոյան նորից բոլորը հանդիպում էին պաշտամունք անցկացնելու համար: Սովորաբար, այսպես էր անցնում մեր հանգստի օրը:

Չորրորդ պատվիրանը. *«Յիշիր հանգստութեան օրը նորան սուրբ պահելու համար»* կարծես մեկացնում է Աստծո հանդեպ մեր ունեցած վերաբերմունքը մարդկանց հանդեպ ունեցած մեր վերաբերմունքի հետ: Աստված հոգ է տանում մեր մասին: Նա ուզում է, որպեսզի մենք ունենանք մեկ օր, որի ընթացքում կարողանայինք զբաղվել ոչ թե մեր առօրյա գործերով՝ ուսմամբ, մաքրությամբ, արտադրական աշխատանքով, այլ՝ սրտով հանգստանալ: Այդ հանգիստը մենք կարող ենք գտնել միայն Աստծո հետ հաղորդակցության մեջ՝ Նրա Խոսքը (Սուրբ Գիրքը) կարդալով, պաշտամունքի գնալով, որպեսզի մյուս հավատացյալների հետ կարողանանք երկրպագել Աստծուն ու փառաբանել Նրան:

Ինչու՞ են քրիստոնյաները շաբաթվա առաջին օրը՝ կիրակին նվիրաբերել, որպեսզի կատարեն չորրորդ պատվիրանը: Կարծում եմ, այն պատճառով, որ այդպես սկսեցին վարվել վաղ շրջանի եկեղեցիները Հիսուս Քրիստոսի հարությունից անմիջապես հետո: Նրանք շաբաթվա առաջին օրը հավաքվում էին աղոթքի, Աստծուն երկրպագելու, Նրա Խոսքը սերտելու, ինչպես նաև հաղորդության մասնակցելու համար:

Աստված տվեց շաբաթը (եբրայերենից թարգմանած՝ «հանգիստ»), որպես Իր Ուխտի (պայմանագրի) նշան Իսրայել ժողովրդի հետ: Դրա համար, կարծում եմ, առաջին քրիստոնյաները նվիրաբերեցին Հիսուս Քրիստոսի մեռելներից հարություն առնելու օրը և Քրիստոսի Եկեղեցու ծննդյան օրն (կարդա Գործք Առաքելոց երկրորդ գլխում և ուշադրություն դարձրու, թե ինչպես և որ օրը տեղի ունեցավ այդ ամենը) այն բանին, որ «հիշեն հանգստի օրը»:

Աստված այդպես է պատվիրել Իր օրենքում: Աստծո համար շատ կարևոր է, որ մեր սրտերի մեջ գան խաղաղությունն ու հանգիստը, դրա համար էլ Նա մեզ տվեց այս պատվիրանը:

ՀԱՏՈՒԿ ՕՐԸ

Այդ օրը հատուկ է, սուրբ է, հասարակ չէ,
Մյուս օրերին նման չէ:
Մենք, գեղեցիկ հագնված, ողջ ընտանիքով,
Գնում ենք Աստծո տուն Իր առաջնորդությունով:

Այնտեղ ինձ հանդիպում են լավ ընկերներ,
Ամենուր տեսնում եմ ծանոթ դեմքեր,
Ժողովին չի կարելի աղմկել,
Կարելի է լսել, երգել և աղոթել:

Որքան եմ սիրում կիրակնօրյա՝ տօնակատարությունը
Աստծո տան մեջ մաքրությունն ու խաղաղությունը:
Սակայն, գիտե՞ք, այդպես չեն ապրում
Բոլոր տներում ու բնակարաններում:

Աստված աշխարհը վեց օրում ստեղծեց,
Իսկ հետո հանգստի օրը սահմանեց,
Ցավալի է, որ մարդկանց մեծամասնությունը,
Մոռացել են օրվա նշանակությունը:

Առօրյա հոգսերի շրջապտույտի մեջ,
Մենք պետք է երբեմն կանգ առնենք:
Աստված շաբաթվա մեջ տալիս է հատուկ օր,
Որպեսզի իր անունը մեծարվի փառավոր:

ՄԱՍ 6

ՈՉ ՄԻԱՅՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ

Ինչու՞ ես տխուր,– հարցրեց Անահիտը, տեսնելով դասասենյակ մտնող Դավիթին,– տանը ինչ որ բան կարգին չէ՞: Իսկ երեկ դու կիրակնօրյա դպրոցի դասին չէիր եկել: Ինչ որ բան է եղե՞լ:

– Հայրիկս ինձ թույլ չտվեց եկեղեցի գնալ,– տրտում ասաց Դավիթը,– ասաց, որ տանն ավելի կարևոր գործեր կան: Ստիպված էի օգնել՝ խոհանոցում դարակներ կախել:

– Ափսոս իհարկե, սակայն դա էլ է պետք:

– Պետք է, չեմ վիճում: Բայց դե դա կարելի է մեկ ուրիշ օր անել,– նեղսրտեց Դավիթը,– նա միշտ այդպես է վարվում. շաբաթ օրը՝ ողջ օրը ավտոտնակով է զբաղված, կիրակի՝ տանը կամ ամառանոցում է մի բան անում: Ես նրան ասացի, որ Աստվածաշնչում գրված է, որ մարդ պետք է վեց օր աշխատի, իսկ մեկ օր՝ հանգստանա, իսկ նա մի ամբողջ դասախոսություն կարդաց իմ գլխին. հիշեց և՛ իմ գնահատականները, և՛ ֆուտբոլը, և՛ դպրոցական արձակուրդները երեք ամիս…

– Մի՛ հուսահատվիր: Դասերից հետո կխոսենք այդ մասին,– հանգստացրեց Անահիտը ընկերոջը:

– Բա չէ, դասերից հետո: Նա ինձ հանձնարարությունների մի ամբողջ ցուցակ է տվել՝ դեղատուն մտնել, տատիկին այցելել, իրերը քիմ. մաքրումից վերցնել: Այնպես որ այսօր չեմ կարող քեզ մոտ գալ:

– Ես կօգնեմ քեզ: Միասին և՛ դեղատուն կգնանք, և՛ տատիկին կայցելենք: Ի միջի այլոց, այդ բոլոր հանձնարարությունները շատ տեղին են: Դու գիտե՞ս թե որն է հաջորդ պատվիրանը,– հարցրեց Անահիտը:

– Գիտեմ. *«Պատուիր քո հօրը եւ քո մօրը»:*

– Այս պատվիրանը շարունակություն ունի. *«… որ քո օրերը երկարանան այն երկրի վերայ՝ որ քո Եհովայ Աստուածը կ՚տայ քեզ»:*

Այս պատվիրանը խոստումով է, այսինքն՝ Աստված երկար կյանք է խոստանում,– բացատրեց Անահիտը,– հնազանդվել ծնողներին ու հարգել նրանց՝ օգտակար է հենց մեզ համար:

– Քեզ համար հեշտ է ասել,– առարկեց Դավիթը,– քո ծնողները հավատացյալ են: Քո հայրը քեզ երբեք չի պատժում: Իսկ ինձ, գիտե՞ս, երբեմն ինչպես են պատժում:

– Ծնողներին չեն ընտրում: Նրանք քո հայրն ու մայրն են: Նրանց շնորհիվ դու աշխարհ ես եկել: Նրանք մեծացրել են քեզ, կերակրում են, հագցնում, հոգ են տանում քեզ համար: Իսկ եթե հայրդ քեզ պատժում է, ապա դա այն պատճառով է, որ քեզ սիրում է, և ուզում է, որ դու որպես լավ մարդ մեծանաս:

– Ես դա հասկանում եմ: Բայց ես երբեմն դժվարանում եմ հնազանդ լինել:

Այդ ժամանակ զանգը հնչեց և ստիպված եղան զրույցը դադարեցնել: Դասերից հետո Դավիթն ու Անահիտը դեղատնից տատիկի համար դեղ գնեցին և ուղղվեցին դեպի նրա տուն: Ստորգետնյա անցումի ժամանակ Անահիտը հանկարծ կանգ առավ:

– Մի վայրկյան սպասի՛ր,– ասաց նա Դավիթին և մոտեցավ ծաղկի կրպակին,– արի՛ տատակի համար ծաղիկ գնենք:

– Չէ՞ որ այսօր Մարտի 8–ը չէ, նրա ինչի՞ն են պետք ծաղիկները:

– Իսկ դու կարծում ես, որ կանանց միայն Մարտի 8–ին է պետք ծաղիկներ նվիրե՞լ,– քմծիծաղեց Անահիտը:

– Դե, նաև տարեդարձին,– ծոծրակը քորեց Դավիթը:

Անահիտը համառ հայացքով նայեց Դավիթին և տատիկի համար դեղին քրիզանտեմներ գնեց:

Տատիկը ջերմ ընդունեց նրանց, մեղրաբլիթով թեյ հյուրասիրեց: Տատիկը շատ ուրախացավ ծաղիկների համար. շարունակ նայում էր ծաղիկների կողմը և մեկ Դավիթի գլուխն էր շոյում, մեկ՝ Անահիտի: Երբ նրանք հրաժեշտ տվեցին տատիկին, Դավիթը նկատեց.

– Գիտե՞ս, սովորաբար նա տրտնջում ու բողոքում է կյանքից, իսկ այսօր այնքան բարի էր: Պատճառը ծաղիկնե՞րն էին:

– Պատճառը հարգանքն էր: Հիվանդ տատիկին դեղ տանելը պարտականություն է: Դա նշանակում է՝ ենթարկվել ծնողներին, որոնք քեզ ինչ որ հանձնարարություն էին տվել: Իսկ ծաղիկներ նվիրել, մի բարի խոսք ասել, կամ պարզապես միասին այգում շրջել՝ հնազանդություն է. և՛ ծնողներին, և՛ տատիկին,– Անահիտը ժպտաց և շարունակեց,– հենց դա է երկարացնում կյանքը և այն դարձնում այնքան լավը, ինչքան այսօրվա երեկոն էր:

– Սպասի՛ր, Անահիտ: Ես հիմա կգամ,– ասաց Դավիթը ու վազեց:

Մի քանի րոպեից նա վերադարձավ աստղածաղիկների երկու փոքրիկ փունջ ձեռքին բռնած:

– Ես մայրիկին ծաղիկներ գնեցի: Նա աստղածաղիկներ է սիրում: Իսկ սա քեզ, Անահիտ, թեկուզ դու ո՛չ իմ մորաքույրն ես, ո՛չ էլ՝ տատիկը,– շփոթված, նա ժպտացող ընկերուհուն մեկնեց երկրորդ փունջը,– և ինչու՞ եք դուք այդքան սիրում ծաղիկներ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Աստծո հիմնական օրենքը (Տաս Պատվիրանները) բաժանվում են երկու մասի՝ պատվիրաններ այն մասին, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ունենանք Աստծո հանդեպ, և թե ինչպես վարվենք մարդկանց հետ: Առաջին չորս պատվիրանների վերաբերյալ, որոնցում խոսվում է մեր վերաբերմունքի մասին Աստծո հանդեպ, մենք արդեն խոսել ենք: Հիմա մենք կխոսենք այն պատվիրանների մասին, որոնցում Աստված ասում է, թե ինչպես մենք պետք է վերաբերվենք մարդկանց հանդեպ: Եվ սկսում է Նա, ինչպե՞ս եք կարծում, ինչի՞ց: Ճիշտ է, ծնողների հանդեպ մեր վերաբերմունքից: Աստված ասում է.

«Պատուիր քո հօրը եւ քո մօրը, որ քո օրերը երկարանան այն երկրի վերայ՝ որ քո Եհովայ Աստուածը կ՚տայ քեզ» (Ել. 20:12):

Ամբողջ աշխարհում մեզ ոչ ոք այնքան չի սիրում, որքան մեր ծնողները: Մենք նրանց մի մասն ենք: Նրանք պատրաստ են ամեն ինչից հրաժարվել, միայն թե մեզ համար լավ լինի: Իզուր չէ, որ Աստված Ինքն Իրեն անվանում է մեր Հայրը. Նրա նման մեզ ոչ ոք չի սիրում: Եվ իզուր չէ, որ բանաստեղծություններ են ձոնվում և երգեր են գրվում մայրական չգերազանցված սիրո մասին: Միգուցե դու մտածում ես, թե մեր ինչին է պետք այս պատվիրանը, քանի որ մենք մեր ծնողներին առանց այդ էլ սիրում ենք: Լավ հարց է: «Պատվի՛ր քո հորն ու մորը» պատվիրանում Տեր Աստված շատ ավելին է դրել, քան պարզապես մանկական սերը հայրիկի ու մայրիկի հանդեպ: Օրինակ, Աստված կտրականապես արգելել է ձայնը բարձրացնել ծնողների վրա: Իսկ նրանց, ովքեր ձեռք

կբարացնեն իրենց հոր կամ մոր վրա, Աստված պատվիրեց մահապատժի ենթարկել: Բայց մի բան էլ կա, որ Աստված մեզանից ակնկալում է մեր ծնողների վերաբերյալ, որն Աստծո և մեզ համար շատ կարևոր է՝ հնազանդություն: Ես գիտեմ, որ դա ամենահեշտ բանը չէ՝ հնազանդվել ծնողներին, սակայն դա Աստծո պատվերն է: Աստվածաշունչն ասում է, որ մարդիկ ըմբոստացան Աստծո դեմ և դարձան *«քսուներ, բամբասողներ, աստուածատողներ, թշնամանողներ, ամբարտաւաններ, գոռոզներ, չար բաներ հնարողներ, ծնողների անհնազանդներ. Անմիտներ, ուխտադրուժներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ»* (Հռոմ. 1:30–31): Դու ուշադրություն դարձրի՞ր *«ծնողների անհնազանդներ»* բառերի վրա: Ծնողներին չհնազանդվելը մեծ մեղք է:

Բացի դրանից, այդ պատվիրանի խոսքերի մեջ կա նաև պատվեր՝ հոգ տանելու ծնողներին, երբ նրանք ծերանան, երբ ոչ թե նրանք հոգ կտանեն քո մասին, այլ քո խնամքի կարիքը կունենան: Անգամ երբ դու կունենաս քո անձնական ընտանիքը, դու պետք է հոգ տանես նրանց համար (պատվե՛ս). զանգես նրանց և հարցնես՝ ինչպե՞ս են, ինչ որ բանի կարիք ունե՞ն: Պարբերաբար այցելիր նրանց, եթե դու նրանց հետ միասին չես ապրում: Հետևիր, որ նրանք ոչ մի բանի կարիք չունենան: Աստված հոգ է տանում, որ ծերերն իրենց լավ զգան, դրա համար էլ Նա տվել է այս պատվիրանը:

Եթե մենք ուզում ենք հետաքրքիր և օրինյալ կյանք ունենալ, մենք պետք է ապրենք Աստծո Խոսքի համեմատ: Օրինակ, Պողոս առաքյալի եփեսացիներին ուղղված նամակի մեջ պարզ գրված է. *«Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողներին Տէրով. Որ այն է արժանը: Պատուիր քո հօրը եւ մօրը, սա է առաջին պատուիրանքը խոստմունքով, Որ քեզ լաւ լինի, եւ երկար ապրես երկրի վերայ»* (Եփ. 6:1–3):

Ուզու՞մ ես, որ քո և քո երեխաների համար լավ լինի: Առանց առարկությունների կատարիր քո Տեր Աստծո հինգերորդ պատվիրանը:

ՊԱՏՎԻՐ ՔՈ ՀՈՐԸ և ՄՈՐԸ

(«Պատվել» բառի յոթ նշանակություններ)

Պատվիր քո հորը և մորը միշտ,
Որպեսզի երջանիկ ապրես ընդմիշտ,
Ենթարկվել, այսինքն՝ պատվել՝
Աստծո առաջ հնազանդվել:

Նրանց աղոթքները, աշխատանքն ու ցավը շարունակ
(հաճախ արևածագից մինչև արևածագ),
Անձնազոհ հավատարիմ սերը գնահատիր,
Դրա համար սրտանց **շնորհակալ** եղիր:

Ոչ մի **գաղտնիք մի՛ պահիր**,
Վստահության կենդանի կապը հաստատիր,
Հիշի՛ր, քո ծնողներն իրենց կյանքը ապրում,
Լավագույնն են քեզ համար ցանկանում:

Երբ հայրդ ու մայրդ կանչում են, մի՛ ուշացրու,
Արագ հասիր նրանց, **շտապիր օգնելու**,
Աստված սիրում է հոժարակամ գործելուն,
Կմեծանաս, կուրախանաս այդ պահը հիշելուց:

Լավ է **նրանց հետ միասին ժողովի լինել**,
Եթե փոքրուց սիրում ես ծառայություն անել,
Քեզ կգնահատի ու կօգնի Աստված
Կյանքիդ համար հիմք դնելով անկասկած:

Մի՛ դատիր քո ծնողներին,
Կյանքի լավագույն քո ընկերներին:
Իսկ եթե փորձեն ծաղրել կամ վատաբանել,
Շտապիր նրանց դու պաշտպանել:

Իսկ «պատվել» բառը մեծ է իր նշանակությամբ
Ջերմորեն **սիրել**, սիրել երջանկությամբ:
Եթե քո հորը և մորը պատվես և սիրես,
Դու ամբողջ կյանքում երջանիկ կլինես:

ՄԱՍ 7

ԱՍՏԾՈ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՊԱՐԳԵՒԸ

Ստացվե՛ց,– երեկոյան զանգեց Դավիթը Անահիտին:

– Ի՞նչը ստացվեց,– միանգամից չհասկացավ Անահիտը:

– Ծաղկեփունջը: Ես մայրիկիս ծաղիկներ նվիրեցի, իսկ նա այնպե՛ս ուրախացավ: Ամբողջ երեկո ուրախ էր: Իսկ հայրիկս ինձ մի տեսակ անսովոր ձևով էր նայում: Սկզբում նա սկսեց հին փոշեկուլը վերանորոգել, իսկ հետո մտափոխվեց ու գնաց խոհանոց՝ մայրիկին օգնելու: Իսկ ընթրիքից հետո մենք միասին հին լուսանկարներն էինք նայում, հիշում էինք անցյալն ու ծիծաղում: Ամեն դեպքում, ես հրաշալի ծնողներ ունեմ, և ես նրանց շատ եմ սիրում:

– Շա՛տ լավ է: Իսկ ես հենց նոր վերջացրեցի մեր ուխտի տախտակների համար հինգերորդ պատվիրանը գրել: Վաղը վեցերորդն է: Իսկ հայրդ վաղը քեզ թույլ կտա՞ գալ մեր տուն,– հարցրեց Անահիտը:

– Կարծում եմ, այո: Բայց եթե նա ինձ ինչ–որ հանձնարարություն տա, դու ինձ ներիր: Ինձ համար շատ կարևոր է անել այն, ինչ ծնողներս են ասում,– պատասխանեց Դավիթը:

Հանձնարարություններ չեղան, և երեկոյան նրանք նորից հանդիպեցին Անահիտենց տանը:

– *«Սպանութիւն մի անիր»*: Կարճ ու հստակ: Սա պարզ ու հեշտ պատվիրան է,– ասաց Դավիթը:

– Այն, որ այս պատվիրանը պարզ է, ես համաձայն եմ: Իսկ այն, որ այս պատվիրանը հեշտ է, այստեղ ես կարող եմ վիճել,– առարկեց Անահիտը:

– Անուլիկ, դու ինձ վախեցնում ես,– աչքերը կլորացրեց Դավիթը,– դու մտածում ես, որ ընդունակ ես այս պատվիրանը խախտել ու ինչ–որ մեկին սպանե՞լ:

Անահիտը մոտեցավ պատուհանին ու նայեց ներքև՝ փողոց, որը լուսավորված էր լապտերների հանդարտ լույսով, հետո ասաց.

– Ես չեմ կարծում, որ ես ընդունակ եմ ինչ որ մեկին սպանելու… Սակայն լինում են պահեր, երբ մասնակից ես լինում սարսափելի իրադարձությունների: Իմ պապիկը մասնակցել է պատերազմի: Նա օդաչու է եղել: Հիմա նա ծեր է, սակայն, երբ հիշում է այն ժամանակները, միշտ արտասվում է:

– Բայց չէ՞ որ դա պատերազմ է եղել: Այլ կերպ չէր կարող լինել,– փորձեց նրան մխաթարել Դավիթը:

– Այո, բայց նա ամբողջ կյանքը հիշում է, թե ինչպես է ռմբակոծել մեքենաների շարասյունները, տներն ու տանկերը, որոնցում կենդանի մարդիկ էին: Այն ժամանակ, երբ երիտասարդ էր, անհավատ էր, և նրա համար թշնամիները պարզապես թշնամիներ էին, և պատերազմը նրան արդար էր թվում: Իսկ հետո նա ապաշխարեց ու հասկացավ, որ սպանել է Աստծո կողմից ստեղծված մարդկանց: Նա շատ է աղոթել, որպեսզի Աստված ների իրեն ու մխիթարի իր սիրտը:

– Բայց չէ՞ որ պատերազմները լինում են նաև արդար,– մտքերի մեջ ընկավ Դավիթը,– Աստվածաշնչում մենք շատ ենք կարդում այդպիսի պատերազմների մասին: Հին Կտակարանը համարյա ամբողջությամբ նվիրված է ճակատամարտերին ու պատերազմներին: Աստված է պատվիրել Իր ժողովրդին այդ մարտերը վարել:

– Աստված ուզում էր Իր ժողովրդի միջոցով ճշմարտություններ սովորեցնել մյուս ազգերին, որոնք կուռքերի էին պաշտում: Իսկ ինչո՞վ է վտանգավոր կուռքերին երկրպագելը: Նրանով, որ դրանք տիրում են մարդկանց հոգիներին ու նրանց դժոխք են տանում:

– Այո, ես կարդացել եմ հեթանոս որոշ ազգերի սովորությունների մասին, և շատ սարսափելի էր: Նրանք նորածին երեխաներին նվիրաբերում էին չար ոգիներին, իսկ որոշներն իրենց երեխաներին ընդհանրապես զոհաբերում էին,– հաստատեց Դավիթը:

Անահիտը շարունակեց.

– Աստված պատվիրեց Իսրայելին արմատախիլ անել այդ ամենը: Ազգեր, որոնք սերունդ առ սերունդ դժոխք էին գնում. դա ամենաավերիչ պատերազմից ավելի վատ է:

– Ամեն դեպքում, լավ է, որ մենք խաղաղ ժամանակներում ենք ապրում: Ես այնպես կուզենայի, որ միշտ խաղաղություն լիներ, և

ես երբևէ ստիպված չլինեի որևէ մեկի վրա կրակել,– արտահայտվեց Դավիթը:

– Դու դրա մասին արդեն կարող ես խնդրել Տիրոջը:

Անահիտը խնամքով գրեց վեցերորդ պատվիրանն ու մի կողմ դրեց ֆլոմաստերը:

– Իսկ գիտե՞ս, թե Քրիստոս ինչ ասաց այս պատվիրանի վերաբերյալ: Նա սովորեցրեց, որ մարդկանց հասցեին ասված անգամ վատ բառերն (անեծքները) արդեն սպանություն են:

– Ա՛յ քեզ բան: Ուրեմն, ստացվում է ի՞նչ. մենք բոլորս մարդասպաններ ե՞նք: Ուրեմն, ի՞նչ անել:

– Վատ բառեր չօգտագործել, ոչ ոքի չծաղրել, ոչ մեկի վատը չցանկանալ, անգամ մեզ նեղացնողների: Թույլ չտալ, որ ատելությունը սրտում բույն դնի,– ասաց Անահիտը:

– Իսկ ի՞նչ անել, եթե ամեն դեպքում, դա տեղի է ունենում: Օրինակ, Գրիշիկը միշտ ծաղրում է ինձ, ծիծաղում է ինձ վրա: Այսօր՝ նույնպես…– հայացքը կախեց Դավիթը:

– Մի՞թե դու չգիտես, թե ինչ է պետք անել,– հարցրեց Անահիտը:

– Գիտեմ… Արի միասին աղոթենք, ես չեմ ուզում մի փոքր անգամ նմանվել մարդասպանի:

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԻՐԱՆԸ

Երբ ես դեռ փոքր էի, իսկ դա վաղուց էր, հիսուն տարի առաջ, ես ծնողներիս, եղբորս ու քրոջս հետ ապրում էի Ղրղզստանում: Ամառային արձակուրդները շատ երկար էին: Ինձ այն ժամանակ թվում էր, որ դրանք վերջ չունեն: Մայիսի սկզբից մինչև սեպտեմբերի մեկը մեզ օրեր շարունակ թողնում էին մեր քմահաճույքին: Եթե պետք չէր լինում կովերն արածեցնել, խոտ նախապատրաստել, կամ այգում բերք հավաքել, ապա մենք գնում էինք ձուկ բռնելու… և՝ որսի:

Մենք՝ փողոցի երեխաները, պարսատիկներ էինք պատրաստել և գնում էինք ճնճղուկներ խփելու: Գոմի մոտ նրանք թիվ ու համրանք չունեին: Ճիշտ է, նրանց համար մենք այնքան էլ մեծ վտանգ չէինք ներկայացնում, քանի որ այնքան էլ հեշտ չէ պարսատիկով ճնճղուկ խփել: Մի անգամ, հեռագրասյան լարի վրա մի թռչյուն նկատելով, ձգեցի պարսատիկն ու կրակեցի նրա վրա: Թռչյունը քարի պես ընկավ փոշոտ ճանապարհի վրա: Մենք վազեցին դրա մոտ և տեսանք, որ փոշու մեջ ընկած էր… մի ծիծեռնակ: Նրա կտուցից արյուն էր գալիս, գլուխն անսովոր ձևով թեքվել էր: Մենք բոլորս կարծես քարացած լինեինք: Նա սատկել էր: Ես նրան վերցրեցի, փչեցի վրան, ձեռքերիս մեջ նրան տարուբերեցի այս ու այն կողմ: Բայց նա չկենդանացավ:

Ես այլևս երբեք ձեռքս պարսատիկ չվերցրեցի: Այդ հիշողության ցավը ես զգում եմ մինչև այսօր:

Աստված Իր Խոսքում պատվեր է տվել.

«Սպանություն մի անիր» (Ել. 20:13):

Իհարկե, Նա ի նկատի ուներ, որ մարդիկ իրար չսպանեին: Բայց իմ մանկության այդ ապրումն ինձ օգնեց հասկանալ, թե ինչ է նշանակում *«Սպանություն մի՛ արա»:*

Աստվածաշունչն ասում է. *«Այն Աստուածը, որ աշխարհքս եւ ամեն բան՝ որ նորանում կայ՝ արաւ, նա երկնքի եւ երկրիս Տէրը լինելով ձեռագործ տաճարներում չէ բնակվում: Եւ ոչ էլ մարդկանց ձեռով է պաշտվում իբր թէ մի բանի կարօտ. նա է ամենի կեանք եւ շունչ՝ եւ ամեն բան տուողը: Եւ նա մէկ արիւնից մարդկանց բոլոր ազգերն արաւ, որ երկրի բոլոր երեսի վերայ բնակուեն. Որոշուած ժամանակներ եւ նորանց բնակութեան սահմանները հաստատեց, որ Աստուծուն խնդրեն. Որ լինի թէ խարխափեն նորան եւ գտնեն. թէ եւ ինքը հեռու չէ մեր ամեն մէկիցը: Որովհետեւ մենք նորանով ենք ապրում եւ շարժվում եւ կանք. ինչպէս ձեր բանաստեղծներից ոմանք էլ ասեցին, թէ Նորա ազգիցն էլ ենք»* (Գործք 17:24–28): Աստված ամենքին կյանք է տալիս: Մարդն իրավունք չունի ինչ որ մեկից այն խլելու: Այն Աստծուն է պատկանում: Նա է միայն սահմանում, թե երբ և ինչպես մարդու կյանքը վերջանա:

Տարբեր գրքերում գրում են և ֆիլմերում ցույց են տալիս, թե ինչքան հանգիստ են մարդիկ սպանում մեկը մյուսին: Իսկ կարդացողներն ու հեռուստադիտողներն ուրախանում են, երբ մահանում են չարերը, այլ ոչ թե՝ բարիները: Բայց չի կարելի դրան վարժվել, չի կարելի համարել, որ մարդիկ իրավունք ունեն մեկ ուրիշին սպանելու: Աստված պարզ ու հստակ է խոսում. *«Սպանութիւն մի արի»:*

Մենք կոչված ենք պահպանել կյանքը երկրի վրա. պահպանել անտառը, հոգ տանել թռչունների համար, հատկապես՝ ցուրտ ձմռանը, խնամքով վերաբերվել բնության և կենդանական աշխարհի հանդեպ: Աստված մարդուն նշանակեց տիրել երկրի վրա. դա դժվար, բայց մեծ պատիվ է:

«ՄԻ ՍՊԱՆԻՐ»

Աստված մեզ ստեղծել է Իր փառքի համար,
Կարևոր դասեր ուսանելու հարմար,
Կյանքը կարգադրելու իրավունք սակայն,
Ունի կյանք տվող Աստվածը միայն:

Մոռանալ այն անհնար է,
Ծայրից–ծայր և դարեցդար,
Հնչում է ահազանգի պես անդադար,
«Մի՛ սպանիր» պատվիրանն արդար:

Մի ասա. «Մենք չենք մեղավորը,
Այդ մեծերն են անում ահավորը»,
Բայց եթե ատում ես քո եղբորը,
Քրիստոս ասաց, որ դու ես մեղավորը:

Հիշի՛ր, ինչքան էլ որ լինի անսովոր,
Հաճախ բառերով մեր ահավոր
Մենք հասցնում ենք խորը վերքեր
Եվ մտերիմներին պատճառում ենք ցավեր:

Դրա համար տարեց տարի
Մի ծայրից մյուսը երկրագնդի,
Հնչում է ահազանգի պես անդադար,
«Մի՛ սպանիր» պատվիրանն արդար:

ՄԱՍ 8

ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԳԻՆ

Այսօր մենք կկարդանք յոթերորդ պատվիրանը,– ասաց Անահիտը, բացելով Աստվածաշունչը,– այն նույնպես կարճ է, վեցերորդ պատվիրանի նման: Բայց այն այնքան էլ հասկանալի չէ, հատկապես երեխաների համար. *«Շնություն մի՛ անիր»:* Դա նշանակում է. «Մի՛ խախտիր ամուսնական փոխհարաբերությունները»: Ներկայումս «շնություն» բառը քիչ է օգտագործվում:

– Երևի այն պատճառով, որ ամո՞թ է դրա մասին խոսելը,– հարցրեց Դավիթը ու կարմրեց:

– Միգուցե, չէ՞ որ այն խայտառակ մեղք է: Ամուսնանալիս փեսացուն և հարսնացուն խոստանում են միմյանց հավատարիմ լինել, միշտ միասին լինել, ապրել նույն տան մեջ, երեխաներին մեծացնել: Ընտանիքում առանձնահատուկ փոխհարաբերություններ են, և դրանք պետք է պահպանել: Մատթեոսի Ավետարանում գրված է. *«եւ երկուսք կ՚լինին մէկ մարմին»*, այսինքն՝ մեկ մարդու պես: Երկու անձերի ամուսնական կյանքում օտար մարդու համար տեղ չկա:

Դավիթը մի փոքր լռեց, իսկ հետո ցածրաձայն ասաց.

– Հիշու՞մ ես, մեր բակի Մարիամիկը անցյալ գարնանը հիվանդանոցում պարկած էր:

– Այո, հիշում եմ:

– Նա ոչ ոքի չէր ասում, թե ինչ է տեղի ունեցել: Բայց մենք նույն շենքում ենք ապրում, և ես գիտեմ… Նրա հայրն ուրիշ քաղաքում գործուղման ժամանակ ծանոթացել էր մի կնոջ հետ, և գրեթե ամեն ամիս գնում էր այդ քաղաքը: Իսկ հետո պարզվեց, որ նա այնտեղ աղջիկ է ունեցել: Երբ Մարիամիկի մայրիկն իմացավ այդ մասին, երկար ժամանակ լալիս էր: Հետո նա ամուսնալուծության հայտ ներակայացրեց: Իսկ Մարիամիկը և հո՛րն է սիրում և մո՛րը:

Դրանից հետո նա նյարդային պոռթկում ունեցավ. Մարիամիկի տատիկն այդ մասին պատմեց:

– Իսկ ծնողները բաժանվեցի՞ն,– հարցրեց Անահիտը:

– Այո, սակայն հայրը երկու մասի է բաժանվում երկու ընտանիքների միջև: Նա հասկանում է, որ Մարիամիկի մայրիկի հետ լավ չի վերաբերվել, Մարիամիկին նույնպես կարոտում է: Իսկ այնտեղ՝ մյուս ընտանիքում նրա փոքրիկ աղջիկն է մեծանում. նա նրան նույնպես չի կարող թողնել: Ահա և ստացվում է, որ բոլորի համար վատ է:

– Այո, դա սարսափելի մեղք է,– հոգոց հանեց Անահիտը,– երեխաների վրա չափից ավելի թանկ է նստում:

Դավիթն ու Անահիտը լուռ նկարազարդում էին յոթերորդ պատվիրանի տառերը:

– Իսկ Հիսուսն այս պատվիրանի մասին Նոր Կտակարանում ի՞նչ է ասում,– հարցրեց Դավիթը:

– Նա ասում էր, որ օտար կնոջ կողմը նայել անգամ չի կարելի,– պատասխանեց Անահիտը:

– Ուրեմն հիմա ի՞նչ, փակ աչքերով քայլե՞նք,– զարմացավ Դավիթը:

– Բանը նրանում է, որ կարելի է տարբեր կերպերով նայել:

– Չհասկացա՛,– ծիծաղեց Դավիթը ու թարթեց աչքերը:

– Կարելի է պարզապես նայել, կարելի և նայել անմաքուր ցանկություններով: Օրինակ, դու ամուսնացել ես, սակայն հարևանի կինը քեզ ավելի է դուր գալիս, քան քո սեփականը: Դու նայում ես ուրիշի կնոջն ու մտածում. «Ի՜նչ լավ կլիներ նրա հետ ամուսնանայի»,– պատասխանեց Անահիտը:

– Չէ՛, ես երբեք այդպես չեմ անի: Ես այնպիսի՛ կին կնտրեմ: Ամենալա՛վը,– ժպտաց Դավիթը:

– Հաջողություն եմ մաղթում, Դավիթիկ, այդպիսի կարևոր հարցում:

– Լավ, Անուլիկ, մեզ՝ տղամարդկանց հետ կապված, կարծես, ամեն բան պարզ է: Իսկ ինչպե՞ս պետք է իրենց պահեն կանայք: Դրա մասին Աստվածաշնչում ի՞նչ է գրված,– հարցրեց Դավիթը:

– Չեմ կարծում, որ հավատարմության հարցում տղամարդկանց ու կանանց միջև հատուկ տարբերություն կա: Միայն թե, սովորաբար, կանանց համար այս պատվիրանի խախտման հետևանքներն ավելի ծանր են լինում, քան՝ տղամարդկանց: Հաճախ կանայք են մնում երեխաների հետ միայնակ: Իսկ դա շատ ծանր է:

Դավիթը նորից լռեց, հիշելով իրենց բակի Մարիամիկին և նրա մորը:

– Մեզ Կիրակնօրյա դպրոցում նաև ասել են,– ավելացրեց Անահիտը,– որ Քրիստոսի Եկեղեցին՝ Նրա հարսնացուն է: Մենք՝ Նրա հարսնացուն ենք: Նշանակում է, մենք պետք է ամեն ինչում հավատարիմ լինենք Քրիստոսին: Իսկ անհնազանդությունը՝ հավատարմության խախտում է մեր Տիրոջ հանդեպ:

– Անահիտ, արի՛ աղոթենք, ես հենց նոր մի բան հիշեցի… Քանի որ ես և դու Նրա հարսնացուն ենք, ուրեմն ամեն ինչում պետք է Նրան հավատարիմ լինենք: Չէ՞ որ մենք սիրում ենք Քրիստոսին:

ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Դու գիտե՞ս, թե ինչու քո դասարանում, քո ընկերների և ծանոթների մեջ, այդքան շատ դժբախտ մարդիկ կան: Արի՛ Աստվածաշնչում կարդանք, թե ինչ է այնտեղ այդ մասին գրված: Ինչպե՞ս ամեն բան սկսվեց: *«Եւ Եհովայ Աստուածը մի խոր քուն բերաւ Ադամի վերայ, եւ նա քնեց. Եւ նորա կողի ոսկորներից մէկն առաւ, եւ նորա տեղը միս լցրեց. Եւ Եհովայ Աստուածն այն կողի ոսկորն, որ Ադամիցը վեր էր առել, մի կին շինեց եւ նորան բերաւ Ադամի մօտ: Եւ Ադամն ասեց. Սա հիմա ոսկր է իմ ոսկրիցը եւ մարմին է իմ մարմնիցը. Սորան կ՚կոչեն Կին. Որովհետեւ սա մարդիցն առնուեցաւ: Սորա համար մարդը կ՚թողէ իր հայրը եւ իր մայրը, եւ կ՚յարի իր կնոջը. Եւ մէկ մարմին կ՚լինին: Եւ նորանք երկուսը մերկ էին՝ Ադամը եւ իր կինը, եւ չէին ամաչում»* (Ծննդ. 2:21–25): Այսպես ստեղծվեց առաջին ընտանիքը: Մեկ տղամարդուն՝ մեկ կին:

Երբ Հիսուս Քրիստոսին հարցրեցին, թե կարելի է արդյոք ամուսնալուծվել, Նա պատասխանեց, որ Աստված ամուսնալուծություն չի նախատեսել: Եթե ինչ որ մեկն ամուսնանում է, ապա այն պետք է լինի ընդմիշտ, ամբողջ կյանքի համար: Դրա համար Աստված տվել է այս պատվիրանը.

«Շնություն մի՛ անիր» (Ծննդ. 20:14):

Ինչ է նշանակում այս խոսքը, դու, հնարավոր է, գիտես: Դա այն դեպքն է, երբ տղամարդը մտածում է, որ ինչ որ մի կին ավելի լավն է, քան իր կինը: Կամ էլ կինն է մտածում, որ մեկ ուրիշ տղամարդու հետ ինքն ավելի երջանիկ կլիներ: Բայց Աստված ասում է, որ դա այդպես չէ: Ինչ էլ որ գրեն գրքերում, ու ցույց տան ֆիլմերում, դու ոչ մեկի հետ չես կարող երջանիկ

լինել, եթե չես կարողանում երջանիկ լինել այն մեկի հետ, ում հետ Աստված քեզ միավորել է: Քանի որ Աստված ասում է՝ եթե Նա է միավորել, ոչ ոք իրավունք չունի բաժանելու:

Երբ Հիսուսն Իրեն շրջապատող մարդկանց ասաց, որ ընտանիք պետք է կազմել ամբողջ կյանքի համար, որոշները վախեցան: Նրանք չէին կարողանում պատկերացնել, թե ինչպես դա կարող է լինել: Քանի որ նրանց շուրջ եղած մարդիկ բաժանվում էին, նորից էին ամուսնանում և կրկին բաժանվում էին… Իսկ Հիսուսն ասաց, որ շատ կարևոր է սիրել միմյանց և չնայել մյուսների վրա կրքոտ աչքերով ու անմաքուր մտքերով: Եվ այդ ժամանակ ընտանիքը երջանիկ կլինի, քիչ կլինեն երեխաներ, որոնք տառապում են, քանի որ իրենց ծնողները միասին չեն ապրում:

«Շնություն մի՛ անիր» պատվիրանը մեծերի համար է, ովքեր ամուսնացած են: Սակայն կարևոր է դեռ փոքրուց իմանալ այս պատվիրանը, որպեսզի հետո սխալներ չանենք: Քեզ համար ևս մի զգուշացում. խուսափի՛ր «մեծական» ֆիլմեր նայելուց, ինտեռնետի մեջ «թափառելուց» և անպարկեշտ գրքեր կարդալուց: Դրանք միայն թվում են անվնաս ու զվարճալի: Իրականում դրանք կործանում են սիրտը և ընտանիքի ու ամուսնության վերաբերյալ սխալ վերաբերմունք են դաստիարակում: Մի՛ նայիր և մի՛ արա այնպիսի բաներ, որոնք դու չէիր անի Հիսուս Քրիստոսի ներկայությամբ: Դրա համար Աստվածաշունչն ուսուցանում է. *«Ամեն զգուշությունից առաւել զգուշացիր քո սրտին, որ նորանից է կեանքի ելքը»* (Առակ. 4:23):

Աստված արգելում է ամուսնությունից դուրս և նախաամուսնական բոլոր տեսակի սեռական հարաբերությունները, քանի որ Նա գիտի, թե ինչն է մարդու համար լավ, և ինչը՝ վատ: Քանի որ Աստված՝ մեր Արարիչն է: Եվ Նա շատ պարզ ու հստակ ասում է. *«Շնություն մի՛ անիր»*:

ԱՆՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Ցանկություն չկա անգամ խոսելու դրա համար,
Մեղքի թակարդներ աշխարհում անթիվ, անհամար:
Որ կողմ նայես՝ ամենուր անհավատարմություն,
Անարդարություն ու չարություն:

Աշխարհը շփոթել է արժեքները բարոյականության,
Ավա՛ղ, ընկել է պահանջարկը աստվածավախության:
Եվ ցուցադրվում է որպես արժեք այն,
Որը ամոթն է համայն մարդկության:

Զգացմունքների մասին ամպագոռգոռ մտքեր են ասում,
Սակայն ճշմարտության աչքերին ուղիղ չեն նայում,
Իմ շատ ընկերներ ու համադասարանցիներ
Իրենց ընտանիքում չունեն հավատարիմ հայրեր:

Տերը պաշտպանում է ընտանիքները, հավատարմությունը,
Ծանր մեղք է սիրո մեջ դավաճանությունը:
Օ՛, եթե հնչեր այս ճշմարտությունը անդադար,
Որպես հրեղեն մի պատգամ բոլորի համար:

ՄԱՍ 9

ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ԳՈՂԱՆԱԼ

Լսի՛ր, Անուլիկ, ես քեզանից նման բան չէ՛ի սպասում,– վրդովված ասաց Դավիթը, թելադրությունից հետո դասասենյակից դուրս գալով,– մենք, կարծես թե, ընկերներ ենք: Ի՞նչ է, ափսոսացի՞ր տաս լուծումն արտագրեմ: Դու հո գիտես, որ ես այդ հավասարումների մեջ բան չեմ հասկանում…

– Այո, ես վատ զգացի, Դավիթ: Ես քեզ խղճացի,– պատասխանեց Անահիտը:

– Եթե դու ինձ խղճայիր, ապա կտայիր արտագրեմ:

– Ես չէի ուզում, որ դու զող լինեիր,– պատասխանեց Անահիտը:

– Գո՞ղ: Ի՞նչ զող: Դու նաև ինձ անուն ես կպցնու՞մ: Ես երբեք ոչ մի բան չեմ գողացել: Ի՞նչ կապ ունի այստեղ մաթեմատիկայի ստուգողականը,– ավելի վրդովվեց Դավիթը:

– Երեկոյան արի մեր տուն. ես կփորձեմ քեզ բացատրել,– պատասխանեց Անահիտը իր բարկացած համադասարանցուն:

– Ես ձեր տուն չեմ գա ո՛չ այսօր, ո՛չ էլ վաղը: Մոռացի՛ր մեր ընկերության մասին,– գոռաց Դավիթը և ուրիշ ճանապարհով տուն գնաց:

– Երեկոյան, լսելով դռան զանգը, Անահիտը բացեց դուռն ու տեսավ շեմին կանգնած Դավիթիկին:

– Ես միայն հետաքրքրությունից դրդված եկա: Հետաքրքիր է, հիմա՛ դու ինչ ես հորինել, Անահիտ:

Անահիտի սեղանին փռված էին ուխտի տախտակները, թղթերն ու ֆլոմաստերները: Աստվածաշունչը բացված էր ծանոթ տեղում՝ Ելից գրքի քսաներորդ գլուխը:

«Գողություն մի անիր». մատիտով գրեց Անահիտը Աստծո օրենքի ութերորդ պատվիրանը:

– Ուրեմն, դու ասում ես, որ երբեք ոչ մի բան չե՞ս գողացել,– հարցրեց նա Դավիթին, և տղան թունդ կարմրեց:

Նա գիտեր, որ Անահիտը հիշում է այն դեպքը դեռ մանկապարտեզից:

– Դու այն խաղալիք մեքենայի մասին ես ասու՞մ, որ ես Արմանչիկից վերցրեցի վերցրեցի: Բայց ես հո մշտական չվերցրեցի: Ուղղակի այնպես ստացվեց, որ այն կոտրվեց, ու ես չկարողացա ետ վերադարձնել,– գրեթե արցունքախառը փորձեց բացատրել Դավիթը,– ես այդ ժամանակ այնքան սաստիկ ամաչեցի, երբ այն իմ գրպանից պատահաբար ցած ընկավ:

– Ես հիշում եմ այդ դեպքը: Բայց ուզում եմ, որ ուրիշ բան էլ հիշես:

Դավիթը մտքերի մեջ ընկավ:

– Բալերը,– հիշեցրեց Անահիտը:

– Ախ, բալե՛րը… Այն, որ մենք Արմենչիկենց հետ արշավի ժամանակ քաղեցի՞նք: Ի՞նչ է, դա գողությու՞ն է: Բալերը ոչ ոքինը չէին, իրենց համար ճանապարհի եզրին աճում էին,– պատասխանեց Դավիթը:

– Իսկ ինչու՞ էիք, այդ դեպքում, դուք դրանք թաքցնում մեզանից ու այնտեղ նստած տատիկներից,– հարցրեց Անահիտը:

– Որովհետև… որովհետև…

– Այդ բալերը ձերը չէին: Դուք զգում էիք, որ ուրիշինն եք վերցրել,– եզրակացրեց Անահիտը:

– Դե, լա՛վ, Անուլիկ: Միայն դու ես սուրբ,– նրանից շրջվեց Դավիթը:

– Սուրբ չեմ… Մի անգամ ես էլ եմ… վերցրել ուրիշինը,– կարմրելով արտաբերեց Անահիտը:

– Դու՞: Չի՛ կարող պատահել: Այդ ինչպե՞ս է եղել:

– Ճաշարանում, սեղանի տակ, ես մի ծամկալ գտա: Գեղեցիկ էր, փայլփլուն, գույնզգույն քարերով… Այն ինձ այնքա՛ն դուր եկավ: Ճաշարանում ոչ ոք չկար, և ես վերցրեցի այն ու թաքցրեցի գրպանիս մեջ: Տանը ես դրանով ամրացրեցի մազերս. շատ գեղեցիկ էր: Բայց տանը չէի կարող այն կրել. գիտեի, որ եթե մայրիկս տեսնի, կստիպի, որ վերադարձնեմ նրան, ով կորցրել էր: Իսկ դպրոցում

նույնպես վախենում էի կրել… Մի ամբողջ շաբաթ տանջվում էի, իսկ հետո պատմեցի մեր դասղեկին:

– Դե՛, ծամկալի տերը գտնվե՞ց,– հարցրեց Դավիթը:

– Գտնվեց: Եվ այդ ժամանակվանից ես որոշեցի, որ երբեք չեմ վերցնի այն, ինչ ինձ չի պատկանում:

– Հասկանալի է: Բայց ի՞նչ կապ ունի այստեղ ստուգողականը,– մտածելուց հետո, հարցրեց Դավիթը,– հավասարումներն ընդհանրապես ոչ մեկինը չեն:

– Հավասարումները ոչ մեկինը չեն, սակայն լուծումներն ինչ որ մեկինն են: Ստացվում է, դու գողանում ես ինչ որ մեկի լուծումները: Համաձա՞յն ես:

– Համաձայն եմ…– հոգոց հանեց Դավիթը,– բայց գիտե՞ս, Անուլ, քանի որ դու իմ ընկերն ես, ստիպված ես ինձ օգնել: Ես այդ հավասարումներից ոչ մի բան չեմ հասկանում:

– Հաճույքո՛վ կօգնեմ: Ինձ համար դրանք լուծելը հեշտից էլ հեշտ են:

– Լսի՛ր, Անուլ, իսկ պարծենկոտների համար պատվիրան չկա՞,– ուրախ ծիծաղեց Դավիթը:

ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Եղե՞լ է, որ դու մի բան գողանաս: Ո՞չ: Դա լավ է: Իսկ եթե եղել է, ապա դու կհասկանաս, թե ինչի մասին եմ ես ուզում պատմել:

Դա ինձ հետ տեղի ունեցավ, երբ ես, միգուցե, հինգ տարեկան էի: Մեր հարևանուհու այգում հրաշալի ոլոռ էր աճում: Դրա ճյուղերը բարձր կանգնած էին ցանկապատից վեր, հատուկ ձողերի վրա: Իսկ մեր այգուց դեպի հարևան այգի մի սողանցք կար, որ մեր բակի շներից մեկն էր փորել: Ես այնքա՛ն էի ուզում այդ ոլոռից, որ չեք կարող պատկերացնել: Ես մտածում էի, որ աշխարհում ավելի համով բան չկար, քան այդ ոլոռի հատիկներով լցված հյութալի պատիճները:

Եվ ես սողոսկեցի հարևանի այգի: Բայց հազիվ էի ես հասցրել մի քանի պատիճ քաղել, երբ ետևիցս լսեցի հարևանուհու խիստ ձայնը. «Վալո՛ղյա, այս ի՞նչ ես անում այստեղ»: Չեմ կարծում, որ նա բարկանում էր, ավելի շուտ, նա զարմացել էր: Բայց ես միանգամից հասկացա, թե ինչու է Աստված այսպիսի պատվիրան տվել.

«Գողություն մի անիր» (Ել. 20:15):

Ես այնպե՛ս էի ամաչում: Հոգուս մեջ այնքա՛ն տհաճ էր: Եվ ոլոռը, որը դեռ ծամում էի, ինձ այնքան անհամ թվաց:

Ազնիվ մարդիկ աշխատում են իրենց աշխատանքով վաստակեն, որպեսզի նրանց երեխաներն ուտելու և հագնելու բան ունենան: Իսկ գողերն ապրում են ուրիշների հաշվին: Նրանք մետրոյում կամ շուկայում

սողոսկում են ուրիշի գրպանն ու տանում, օրինակ, մայրիկի կամ հայրիկի ամբողջ ամսվա աշխատավարձը:

Միգուցե դու ասես, որ խանութում այնքան բան կա, և կարելի է ինչ որ բան վերցնել ու չվճարել: Ո՛չ, չի՛ կարելի: Քանի որ այդ բոլոր ապրանքները պատկանում են ինչ որ մեկին:

Սակայն գողանալ, հնարավոր է, ոչ միայն փող կամ ապրանքներ: Հնարավոր է գողանալ նաև պատիվ: Օրինակ, վազքի մրցույթի ժամանակ հասնել ինչ որ մեկին, ոտքը ոտքի տակ դնելով գցել ու առաջինը հասնելով, ստանալ մրցանակը: Բայց այդ մրցանակը գողացված է: Այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել: Դասի ժամանակ արտագրելը նույնպես գողություն է. դու գողանում ես ուրիշի գիտելիքը, գնահատական ես ստանում կողքիդ նստողի գիտելիքների հաշվին:

Ինչպե՞ս ես կարծում. չարժանացած մրցանակ ստացած մարդն ուրախանու՞մ է: Ո՛չ, երբե՛ք: Նա իր ողջ կյանքում կհիշի այդ խաբեության մասին, և դա շարունակ կհետապնդի նրան:

Սուրբ Գիրքն ասում է. *«Նա որ գողանում էր, թող էլ չ'գողանայ, այլ մանաւանդ աշխատէ իր ձեռներովք բարին գործելով. որ ունենայ տալու՝ պէտք ունեցողին»* (Եփ. 4:28): Իսկ Սողոմոնի Առակաց գրքում մեկ անգամ չէ, որ հիշատակված է, որ Աստծո առաջ պղծություն է, երբ շուկայում ինչ որ մեկը թերակշռում է: Օրինակ, երբ մեկը շուկայում ինչ–որ բան է վաճառում, խարդախ կշեռք օգտագործելով: Ուրիշներին թալանելով, մարդն ինքն իրեն էլ է թալանում, քանի որ Աստծո առաջ պղծություն է անում: Աստված կօրհնի՞ նրան կամ նրա ընտանիքը: Իհարկե, ո՛չ: Աստված բոլոր ժամանակների և բոլոր մարդկանց համար տվել է պատվիրան. *«Գողութիւն մի անիր»:*

«ՄԻ ԳՈՂԱՑԻՐ»

Օրենքի հեղինակը Սինայի վրա
Մեր Աստվածն էր և միայն Նա,
Ութերորդ պատվիրանը սրտիդ վրա գրիր.
Պարզ ու համառոտ. «Մի՛ գողացիր»:

Գաղտնի վերցրեցիր, և դարձյալ իզուր,
Ներծծվեց հողի մեջ ինչպես ջուր,
Ո՛չ իրեր, ո՛չ գիտելիք, ո՛չ աշխատանք՝
Ուրիշինը մի՛ օգտագործիր և մի՛ գողացիր:

Մեր Աստված հարուստ է, հոգատար,
Խնամքով հոգ է տանում մեզ համար:
Խնդրի՛ր, և Նա ընդառաջ կգա,
Եվ անհրաժեշտ բաները քեզ կտա:

Աստվածաշնչում Աստված զգուշացնում է,
Եվ ժողովի ժամանակ էլ քարոզվում է.
«Եթե գողացել ես, այլևս մի՛ գողացի,
Գողերն Աստծո Արքայությունը չեն ժառանգի»:

ՄԱՍ 10

ԳԵՂԵՑԻԿ ՍՈՒՏ

Դավիթն ուրախանում էր, որ ուխտի տախտակների վրա աշխատանքը մոտենում էր ավարտին: Հրաշալի ստացվեց. Անահիտը նրան սովորեցրել էր տառերն այնպես գրել, որ դրանք ծավալուն էին թվում, կարծես քարի վրա փորագրված լինեին: Սակայն ամենաշատը Դավիթին դուր էր գալիս այն, որ նրանք ոչ թե ընդամենը ուխտի տախտակների կրկնօրինակն էին ստեղծում, այլ փորձում էին ավելի լավ հասկանալ, թե ինչ էր ուզում Աստված ասել մարդկանց, տալով Տաս Պատվիրանները:

– Այսպիսով, Դավիթ ջան,– ասաց Անահիտը, բացելով Աստվածաշունչը,– այսօր մենք անցնում ենք իներորդ պատվիրանը: Կարդա՛:

– *«Քո դրացու դեմ սուտ վկայություն մի անիր»*,– կարդաց Դավիթը,– սա ի՞նչ է նշանակում, Անուլիկ: Աստված չի ուզում, որ մենք ինչ որ մեկի մասին սուտ բան ասե՞նք:

– Աստված ընդհանրապես չի ցանկանում, որ մենք սուտ խոսենք: Ես տախտակների վրա այսպես կգրեի. «Մի՛ստիր»,– պատասխանեց Անահիտը:

– Բայց այստեղ միայն սուտ վկայության մասին է գրված ինչ որ մեկի հասցեին,– առարկեց Դավիթը,– օրինակ, եթե ես ստեմ, ասելով, որ այդ դու ես անցյալ ուրբաթ կոտրել բնագիտության դասասենյակի պատուհանը…

– Այդպես, այդպես, Դավիթ ջան, իսկ այդտեղից, խնդրում եմ, ավելի մանրամասը,– հետաքրքրվեց Անահիտը,– դու ինչ է, գիտե՞ս, թե իրականում ով է այն կոտրել:

Դավիթը կարմրեց.

– Դե, հասկանու՞մ ես… Չէ, ես չեմ կարող, ես խոսք եմ տվել:

– Գիտե՞ս, թաքցնելով, թե ով է դա արել, դու ստում ես նրա հետ միասին. և խախտում ես Աստծո պատվիրանը:

– Իսկ եթե ասեմ, թե ով է կոտրել, մատնիչ ու դավաճան կդառնամ,– հուսահատված ասաց Դավիթը:

Անահիտը լուռ շարունակում էր ներկել տառերը: Դավիթը չդիմացավ.

– Լա՛վ… Սեյրանչոն է կոտրել: Պատահաբար: Մենք բոլորից շուտ էինք եկել, նա վերցրեց ցուցափայտը, սկսեց խաղալ, իբր թե բիզոնի որս է անում… Ու հենց նիզակի նման էլ նետեց ցուցափայտը: Մենք փախանք, ու ես խոսք տվեցի, որ նրան չեմ մատնի:

– Եվ երբ ընկեր Մուրադյանը հարցրեց, թե ով է արել, դու լռեցիր: Իսկ երբ նա ասաց, որ հավանական է, Ասատուրն է նորից աչքի ընկել, քանի որ արդեն երեք անգամ պատուհան է կոտրել, դու նորից լռեցիր: Իսկ երբ Ասատուրը փորձեց արդարանալ ու արտասվեց, դու դարձյալ լռեցիր: Ինչպե՞ս ես կարծում, ինչ էր նշանակում այդ պահին քո լռությունը:

– Ես լռում էի, և դա սուտ վկայություն էր կողքինի հանդեպ,– քիթը քաշեց Դավիթը,– բա հիմա ես ի՞նչ անեմ, Անահիտ:

– Ասա Սեյրանչոյին, որ խոստովանի, որ ինքն է կոտրել պատուհանը: Որ դու չես կարող նրա արարքը թաքցնել, ու եթե

նա ինքը չասի, դու ստիպված ես լինելու այդ մասին ասել ընկեր Մուրադյանին:

– Քեզ համար հեշտ է ասելը…

– Ճշմարտությունը միշտ չէ հեշտ տրվում,– ասաց Անահիտը,– բայց սուտը մի հատկություն ունի՝ այն միշտ ջրի երես է դուրս գալիս:

– Դա ճիշտ է,– հաստատեց Դավիթը,– ես դրանում հարյուր անգամ եմ համոզվել:

– Ես նույնպես,– խոստովանեց Անահիտը,– ես երբեմն սիրում եմ չափազանցնել: Ինչ–որ բան պատմում եմ, ու չեմ զգում, որ թե ինչպես է սուտը լեզվիցս թռնում: Թվում է մանրուք է, բայց՝ սուտ է: Թվում է, անգամ, լավ բան է, բայց՝ անճշտություն է: Բայց կա մի օրինաչափություն. շատ շուտ պարզվում է, որ ես սուտ եմ խոսել: Այնպե՛ս եմ ամաչում:

– Այո, ինձ հետ էլ է պատահել: Հավանաբար, Աստված հոգ է տանում այն մասին, որ սուտը մեզ համար սովորություն չդառնա, դրա համար էլ այն բացահայտում է: Սա շատ օգտակար պատվիրան է. «Մի՛ ստիր»:

Դավիթն ու Անահիտը լուռ շարունակեցին ներկել տախտակների վրայի տառերը: Ավարտելով, Դավիթն ասաց.

– Ես Սեյրանչոյից կխնդրեմ, որ խոստովանի, որովհետև Աստված է այդպես պահանջում: Իսկ եթե նա չցանկանա, ապա ավելի լավ է բոլորն ինձ մատնիչ անվանեն, քան թե Աստված ինձ ստախոս համարի…

– Դավիթ, հիշու՞մ ես, ես քեզ ասել եմ, որ ճամբարում լողից առաջին տեղն եմ գրավել,– կարմրելով ասաց Անահիտը:

– Դա ինչ է, սու՞տ էր:

– Ոչ այնքան: Այդ մրցույթները տեղի չունեցան, քանի որ ինձանից բացի ոչ ոք լողալ չգիտեր… Թվում է, իրոք, առաջին տեղն եմ զբաղեցրել… իսկ իրականում՝ անճշտություն է: Ես Աստծուց արդեն ներողություն խնդրել եմ դրա համար: Իսկ հիմա քեզանից եմ խնդրում՝ ների՛ր ինձ, խնդրում եմ, ես քեզ անճշտություն ասացի:

– Լավ, Անուլ ջան,– ժպտաց Դավիթը,– առաջարկում եմ ուրբաթ օրը լողավազան գնալ: Կստուգենք, թե ո՞վ կգրավի առաջին տեղը՝ դու՞, թե՞ ես:

ԻՆԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Եկենք խոսենք մի բանի մասին, որին բոլորն արդեն վարժվել են՝ ստի մասին: Աստված պատվիրան տվեց.

«Քո դրացու դէմ սուտ վկայութիւն մի անիր» (Ել. 20:16):

Պատվիրանը պարզ է ու հասկանալի: Կամ, միգուցե, մի փոքր բացատրե՞նք: Այս պատվիրանը նշանակում է. չնվազեցնել, չչափազանցնել, անճշտություններ չասել… Միգուցե, մյուսների նման, դու նույնպես մտածում ես. «Դե, սուտը, այնքան էլ սարսափելի բան չէ: Չէ՞ որ դա ո՛չ գողություն է, ո՛չ սպանություն, ո՛չ էլ շնություն»: Բայց Աստված Տաս Պատվիրաններից մեկը նվիրեց հատուկ սրան. արգելեց մեզ սուտ խոսել: Հատկապես՝ զրպարտել ուրիշներին:

Ինչու՞ ենք մենք երբեմն խաբում: Օրինակ, մենք մի վատ բան ենք արել և վախենում ենք խոստովանել: Մտածում ենք, որ ճշմարտությունն ասելն ավելի վատ է, քան՝ ստելը: Իսկ երբեմն, որ ամենավատն է, մենք մեղքը գցում ենք ուրիշի վրա: Սա քեզ ծանո՞թ է:

Հիշու՞մ ես, թե Եդեմում առաջին մարդիկ իրենց ինչպես պահեցին: Աստված արգելեց Ադամին ու Եվային Եդեմի պարտեզի միայն մեկ ծառի պտուղներից ուտել, ասելով, որ կմեռնեն, եթե անհնազանդ լինեն: Իսկ սատանան ասաց Եվային. «Ո՛չ, չե՛ք մեռնի… այլ աստվածների պես կլինեք»: Եվ Եվան հավատաց նրան: Սատանան խաբեց նրան: Հիսուսը սատանայի մասին ասաց. *«Դուք ձեր սատանայ հօրիցն էք, եւ կամենում էք ձեր հօր ցանկութիւններն անել. Նա սկզբիցը մարդասպան էր, եւ ճշմարտութեան մէջ չ'կեցաւ, որովհետեւ ճշմարտութիւն չ'կայ նորանում. Երբոր սուտն է խօսում,*

իրաններիցն է խօսում, որովհետեւ ստախօս է եւ ստութեան հայրը» (Հովհ. 8:44):

Իսկ ի՞նչ պատասխանեցին մարդիկ Աստծուն, երբ Նա հարցրեց, թե արդյոք չէ՞ին կերել արգելված ծառի պտղից: Ադամն ասաց. *«Այն կինը, որ ինձ հետ տուիր, նա տուաւ ինձ այն ծառիցը, եւ ես կերայ»:* Իսկ Եվա՞ն ինչ ասաց. *«Օձն ինձ խաբեց, եւ ես կերայ»*: Տեսնու՞մ ես, նրանցից յուրաքանչյուրը փորձեց մեղքը գցել ուրիշի վրա:

Գործք Առաքելոց գրքում գրված է մի պատմություն, որը ցույց է տալիս մեղքի վտանգավորությունը: Անանիան և Սափիրան, որոնք ամուսիններ էին, որոշեցին խաբել առաքյալներին: Բայց հենց որ նրանք դա արեցին, անմիջապես մահացան: Իհարկե, դա մի առանձնահատուկ դեպք էր: Բայց մտածելու տեղիք է տալիս, այպես չէ՞: Եթե մենք ուզում ենք Աստծո հետ ապրել, ապա միշտ պետք է ճշմարտությունն ասենք: Սուտ խոսացողը սատանայից է խոսում, իսկ ճշմարտություն խոսացողը հաճելի է Աստծուն: Հիսուսն Իր մասին ասաց. *«Յիսուսը նորան ասեց. Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը. ոչ ով չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով»* (Հովհ. 14:6):

«Իսկ ինչ կարելի է ասել կիսաճշմարտությա՞ն մասին»,– գուցե հարցնես դու: Սուրբ Գրքից մի տիպիկ օրինակ բերեմ: Աբրահամը երկու անգամ՝ Եգիպտոսում ու Գերարայում, իր կնոջ՝ Սառայի մասին ասաց (իր կյանքի համար վախենալով), որ իր քույրն է: Արդյունքում, նա քիչ մնաց զրկվեր իր կնոջից, որն իրականում հանդիսանում էր Աբրահամի խորթ քույրը:

Ճշմարտություն կամ կիսաճշմարտություն՝ միևնույն բանն է: Նա մեզ պատվիրաններ է տալիս՝ պարզ ու հասկանալի: Խնդրենք Աստծուն, որպեսզի մեզ օգնի ազնիվ լինել և ոչ ոքի մասին վատ չխոսել, հատկապես՝ սուտ:

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Որպեսզի դատավորը Օրենքի օրերին
Չնեղացներ անմեղներին ու նեղյալներին,
Պատվիրում էր Աստված մարդուն.
«Դրացուդ հանդեպ մի՛ արա սուտ վկայություն»:

Պատվիրանը կենդանի է նաև այսօր,
Մի շտապիր հավաքել լուրեր թարմ ու նոր,
Ու գաղտնի փոխանցել մարդկանց.
Միգուցե խռովեցնես մտերիմ մարդկանց:

Որպեսզի ճանապարհին հանկարծ
Չցածրացնես հոգին վիրավորված,
Սուտը և լուրը տարբերել սովորիր,
Շատ լսիր, քիչ շատախոսիր:

Պատվիրանը ուղղված է մարդկանց,
Եվ հիմա, հազարամյակներ անց,
Աստված հույս ունի, որ քո մեջ կգտնի
Հավատարիմ ու բարի մի վկայի:

ՄԱՍ 11

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁԵՐ

Դե ի՞նչ, դու ասացի՞ր Սեյրանին, որ խոստովանի, որ ինքն է կոտրել պատուհանը,– հարցրեց Անահիտը, Դավիթի համար բացելով դուռը:

– Ասացի. սակայն նա ծիծաղեց ինձ վրա, երբ ես նրան ասացի Աստծո մասին: Իսկ հետո սպառնաց, որ ջարդս կտա, եթե բացբերանություն անեմ…

– Ոչինչ, մի փոքր սպասենք, միգուցե նա, ի վերջո, կվճռի,– իր վշտացած հյուրին հանգստացրեց Անահիտը,– անցիր ներս, այսօր մեզ մոտ հատուկ օր է:

– Այո, մենք հասանք ավարտին: Այսօր վերջին՝ տասներորդ պատվիրանն է,– հանդիսավոր հայտարարեց Դավիթը, բացելով Աստվածաշունչը Ելից գրքի քսաներորդ գլուխը,– *«Մի ցանկանար քո դրացու տանը, քո դրացու կնոջը կամ նորա ծառային՝ կամ նորա աղախնին՝ կամ նորա եզին՝ կամ նորա էշին եւ քո դրացու ոչ մէկ բանին»:*

– Դե, ինչպե՞ս համառոտ կգրենք այս պատվիրանը,– հարցրեց Անահիտը:

– «Մի՛ ցանկացիր…», իսկ հետո՞ ինչ գրենք: Այստեղ ես տեսնում եմ, որ շատ բաներ մեզ չի վերաբերվում: Կնոջ հետ կապված մենք պարզաբանեցինք յոթերորդ պատվիրանի ժամանակ,– Դավիթը թեք նայեց քանոնին,– մենք ո՛չ էշեր ունենք, ո՛չ էլ ստրուկներ: Մնում է դրացու տունը և ունեցվածքը:

Դավիթը մտքերի մեջ ընկավ.

– Անուշ, ես կուզենայի մի բան ճշտել: Նայի՛ր, դուք շատ լավ, վերանորոգված բնակարան ունեք: Դու անգամ քո սենյակն ունես, բնակարանում մեծ հյուրասրահ կա, երեք պատշգամբ, ընդարձակ խոհանոց… Ես այնքան մեծ հաճույքով եմ քեզ հյուր գալիս: Իսկ մենք ապրում ենք հին շենքի մի փոքրիկ տան մեջ: Ես ու Գրիշը միասին

քնում ենք միջանցքում: Մեր տանը սառնարանն անգամ միջանցքում է դրված: Եվ ես, անկեղծ ասած, ցանկանում եմ, որ մենք էլ այնպիսի բնակարան ունենանք, ինչպիսին ձերն է: Դա մե՞ղք է:

– Ես կարծում եմ, որ դա նորմալ ցանկություն է՝ ունենալ լավ, հարմարավետ բնակարան կամ տուն, տան համար անհրաժեշտ իրեր: Բայց երբ սկսում ենք համեմատել, թե ով ինչ ունի, կարող ենք մեղանչել, նախանձելով նրան, ով ունի մի բան, որ մենք չունենք: Իսկ երբ մենք նախանձում ենք, մենք կարծես Աստծուն ասում ենք. «Տե՛ր Աստված, դու անարդար ես բաժանել Քո ունեցածը: Դու ինձ ավելի քիչ ես տվել, քան՝ իմ հարևանին: Գուցե, Դու ինձ ավելի քի՞չ ես սիրում»:

– Ստացվում է, ցանկությունը կարող է վերածվել նախանձի, և այդ ժամանակ մենք մեղանչում ենք: Իսկ ինչպե՞ս կողմնորոշվել, թե որտեղ է նորմալ ցանկության և նախանձի միջև եղած սահմանը,– հարցրեց Դավիթը:

Անահիտը մտքերի մեջ ընկավ, իսկ Դավիթն ինքը պատասխանեց իր հարցին.

– Միգուցե, երբ ցանկությունը՝ ունենալ մի բան, որ մեկ ուրիշն ունի, նյարդայնացնում է: Ձեր բնակարանն ինձ դուր է գալիս, բայց դա ինձ չի նյարդայնացնում. ես գիտեմ, որ քո հայրը լավ մասնագետ է, շատ է աշխատում, դրա համար էլ կարողացել է գնել այս լավ բնակարանը: Ես դա հասկանում եմ: Իսկ ի՞նչ անել, եթե մեկը մի բան ունի, որը նա չի վաստակել: Եթե նա անազնիվ ճանապարհով շատ փող է ձեռք բերում և ապրում է ճոխության մեջ. իսկ կողքին ապրում են մարդիկ, որոնք մի կտոր հացի փող չունեն:

– Դավ ջան, Աստված գիտի, թե ում ինչքան տա: Դա Նրա իրավունքն է: Նրա համար կարևոր է մեր սրտի վիճակը, իսկ աղքատությունն ու հարստությունը պայմաններ են, որոնց մեջ Աստված մեզ փորձում է: Հարստության փորձությունն այնքան էլ հեշտ չէ: Աղքատության և չունևորության մեջ մարդ ավելի շուտ է գալիս Աստծո մասին մտածելուն: Իսկ հարստությունն ավելի հաճախ հեռացնում է Տիրոջից: Իհարկե, պատահում են նաև բարի սրտով հարուստ մարդիկ, որոնք օգնում են շատերին, զոհաբերում են եկեղեցու համար: Բայց դա հաճախ չի պատահում: Փողը մարդուն կեղծ հույս է ներշնչում՝ «դու ամեն ինչ կարող ես գնել, քեզ համար սարսափելի չեն կյանքի փորձությունները, դու հզոր ես: Ինչի՞դ է պետք Աստված»: Բայց երկրավոր հարստությունները ժամանակավոր են: Դրանք կարող են երկրի վրա հարմարավետություն ստեղծել, սակայն դրանք երբեք չեն կարող խաղաղություն ապահովել սրտում, հույս տալ հավերժական ապագայի հանդեպ:

– Այո, չէ՞ որ մենք գիտենք, որ կան ուրիշ գանձեր, երկնային՝ սեր, արդարություն, բարեսրտություն: Ավելի լավ է հոգ տանել, որ դրա՛նք լինեն մեր կյանքում, այլ ոչ թե մեծ տներ և ուռած դրամապանակներ: Արի մեր տախտակների վրա պարզապես գրենք. «Մի՛ նախանձիր»,– եզրակացության եկավ Դավիթը:

– Այս պատվիրանը շատ դժվար է կատարել: Քանի որ այնքան բան կա, ինչին կարելի է նախանձել՝ ուրիշի առողջությանը, խելքին, գեղեցկությանը,– ավելացրեց Անահիտը:

– Օ՛յ, Անուլիկ, դու վտանգի մեջ ես,– կատակով ասաց Դավիթը, նայելով իր արտացոլմանը հայելու մեջ:

ՏԱՍԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Մի քանի տարի առաջ ես այցի գնացի Ղազաղստանում մի գյուղակ, որտեղ շատ տարիներ առաջ ես առաջին անգամ գնացի դպրոց, որտեղ սովորեցի լողալ և չմուշկ վարել, որտեղ անցել էին իմ մանկության տարիները: Ինձ հետաքրքիր էր մեծահասակի աչքերով նայել այդ ամենին: Ես մեքենայով գնում էի, երբ իմ ուշադրությունը գրավեց մի տղա, ով հեծանիվով սլանում էր փոշոտ փողոցով: Կանգնեցնելով մեքենան, ես մոտեցա նրան: Ինձ հետաքրքիր էր, թե ինչպես են իրենց զգում տղաները մեր ժամանակներում, գրեթե կորած մի գյուղակում: Բարևելով, ես հարցրի նրան. «Տղաս, դու երջանի՞կ ես»: «Իհա՛րկե», պատասխանեց նա, և ժպիտը լուսավորեց նրա դեմքը: Նա թռավ հեծանիվի վրա, որը նստատեղ ու որոշ մասեր չուներ, և նորից սլացավ փոշոտ փողոցով: Այդ տղան գոհ էր այն ամենով, ինչ ուներ: Իսկ եթե նա գոհ չլիներ: Եթե, օրինակ, ուզենար ունենալ այնպիսի հեծանիվ, ինչպիսին ունեն հարուստի երեխաները: Այդ տղան երջանիկ կլինե՞ր: Իհարկե, ո՛չ: Աստված, իմանալով, թե ինչպիսին ենք մենք՝ մարդիկս, պատվիրան տվեց.

«Մի ցանկանար քո դրացու տանը, քո դրացու կնոջը կամ նորա ծառային՝ կամ նորա աղախնին՝ կամ նորա եզին՝ կամ նորա էշին եւ քո դրացու ոչ մէկ բանին» (Ել.20:17):

Աստվածաշունչն ասում է, որ մեծ երջանկություն է լինել բարեպաշտ և գոհացող: Ամենահարուստ մարդը նա է, ով գոհանում է իր ունեցածով, այլ ոչ թե նա, ով մի նոր ու գեղեցիկ բան տեսնելով, իր ունեցածից ավելի լավը, և միանգամից կորցրեց ուրախությունն ու դադարեց Աստծուն երախտապարտ լինելուց:

Աստված ուզում է, որ մենք լինենք ուրախ, երջանիկ ու բավարարված, դրա համար էլ մեզ տվել է *«Մի ցանկանար»* պատվիրանը: Նա ուզում է մեզ ետ պահել նախանձից ու վեճերից, գողությունից ու մյուս բոլոր մեղքերից, որոնց մեջ մենք կարող ենք ընկնել, եթե շարունակ համեմատենք մեր ունեցածը ուրիշի հետ և ցանկանանք այն, ինչ մերը չէ:

Սակայն այս պատվիրանով Աստված ուզում է մեզ ետ պահել նաև ուրիշների ընդունակություններին կամ հաջողություններին նախանձելուց: Ինչքան արագ ենք մենք ընկնում այսպիսի վիճակների մեջ՝ եթե ես այսինչի նման ուժեղ լինեի, կամ ա՛խ, եթե ես նրա նման գեղեցիկ լինեի: Կարծում եք, դուք ավելի երջանիկ կլինե՞իք: Ո՛չ: Երջանիկ է միայն նա, ով գոհանում է այն տաղանդներով, որ Աստված իրեն օժտել է:

Միշտ ստուգիր քո սիրտը, մտքերն ու ցանկությունները: Աստված իզուր չի ասել. «Մի՛ ցանկացիր այն ամենը, ինչ ունի քո հարևանը»: Ուզու՞մ ես երջանիկ լինել: Բավարարվի՛ր այն ամենով, ինչ ունես և շնորհակալություն հայտնիր Աստծուն:

ՄԻ ՑԱՆԿԱՑԻՐ

Դա սկսվեց դեռ Եդեմում.
Ադամի ու Եվայի համար Աստված
Ուներ ամեն բան պատրաստած,
Որ աչք էր շոյում և ուրախացնում:

Բայց նենգ օձը ներս սողոսկեց
Եվ այգում ամեն բան փոխվեց.
Այն միակ բանը արգելված
Դարձրեց նրանց դժբախտ ու մերժված:

Դա սկսվեց դեռ Եդեմից.
Հիվանդությունն ու մահը եկան մեղքի հետևից ,
Այսօր էլ նույն խնդիրը կա՝
Մարդու ցանկությանը չափ չկա:

Ուզում են ունենալ, ինչ ուրիշն ունի.
«Ինչու՞ ես չունեմ, իսկ նա ունի»:
Սակայն նախանձի արդյունքում,
Եթե ենթարկվես, կլինես ինչպես կրակում:

Գոհությունը՝ բուժող դեղի պես է,
Աստծո ողորմությունը՝ արևածագի լույսի պես է:
Դրա համար անհրաժեշտ է և օգտակար,
Գոհանալ Աստծուց ամեն բանի համար:

Սրտում դառնություն մի կուտակիր,
Այլ Աստծո օրհնությունները հիշիր,
Ուրիշի ունեցածին մի նախանձիր,
Ուրիշինը մի ցանկացիր:

ՄԱՍ 12

ԹԱՆԿԱԳԻՆ ԲԵՌԸ

Անահիտ, կարո՞ղ ես այսօր ձեր տուն գալ Սեյրանի հետ միասին,– հարցրեց Դավիթը,– նա մի քանի հարցեր է ուզում քեզ տալ: Ես նրան ասացի, որ խաբելու համար մարդ կարող է դժոխք ընկնել: Իսկ նա ինձ պատասխանեց, որ այդ դեպքում բոլորը դժոխքում կհայտնվեն: Իսկ երբ նրան պատմեցի Աստծո բոլոր պատվիրանների մասին, նա ասաց, որ դա անտանելի ծանրություն է մարդու համար, և որ ոչ ոք չի կարող ողջ օրենքը կատարել:

– Լավ, երկուսով եկեք,– համաձայնվեց Անահիտը:

Երեկոյան Անահիտը առաջարկեց սկզբում ավարտին հասցնել գործը, իսկ հետո՝ խոսել: Սեյրանը հետևում էր, թե ինչպես են ընկերները կտրում թուղթը, որի վրա գրված էր Տասներորդ պատվիրանը և զգուշությամբ այն փակցնում ստվարաթղթե տախտակների վրա:

– Պատրա՛ստ է,– հանդիսավոր հայտարարեց Դավիթը և տախտակները դրեց սեղանին:

– Իհարկե, իսկական տախտակներն այսպիսին չեն եղել,– ասաց Անահիտը,– դրանք մեծ քարե սալիկներ էին, իսկ տեքստն էլ եբրայերեն էր: Սակայն Աստվածաշունչը մեզ համար պահպանել է այս Տաս Պատվիրանները, որոնք Աստված տվել է բոլոր մարդկանց և բոլոր ժամանակների համար, քանի որ Աստծո օրենքը հավիտենական է, և ոչ ոք չի կարող այն փոփոխել: Դու հարցեր ունե՞ի, Սեյրան,– դիմեց Անահիտը համադասարանցուն:

– Այո, ես ուզում էի հարցնել. եթե Աստված ամեն բան գիտի, ուրեմն ինչու՞ է տվել պատվիրաններ, որոնք բոլորը խախտում են: Օրինակ. «Սուտ վկայություն մի անիր» կամ «Մի ցանկանար»: Ես գոնե մեկ մարդ չգիտեմ, ով կկարողանար դրանք կատարել: Դավիթն ասաց, որ Հիսուս Քրիստոսը կատարել է դրանք: Բայց դրանից ինձ ի՞նչ օգուտ: Ես հո չեմ կարողանում: Օրինակ, ասենք, ես մեղք

գործեցի. կոտրեցի պատուհանը, իսկ հետո՝ ստեցի: Հաշվենք՝ երկու մեղք: Ասենք թե, ես խոստովանեցի, ներողություն խնդրեցի, բայց իմ մեղքերը ոչ մի տեղ հո չկորան: Դրանք, երևի, Աստծո մոտ մի տեղ գրված են: Իմ հիշողության մեջ էլ դրանք շարունակում են մնալ:

– Գիտե՞ս, Մեյրան ջան, Քրիստոսը հենց այնպես չկատարեց օրենքը. Նա դա արեց մեզ համար, մեր փոխարեն: Ես քեզ կպատմեմ, թե ինչպես Նա արեց դա:

Անահիտը վերցրեց պատկերազարդ Մանկական Աստվածաշունչը, բացեց այն էջի վրա, որտեղ Գողգոթան էր պատկերված, ու ասաց.

– Ասա՛, օրինախախտներին ի՞նչ է սպասում:

– Պատիժ:

– Տեսնու՞մ ես, սա Հիսուսն է՝ խաչի վրա գամված: Նա Իր վրա վերցրեց մեր բոլոր մեղքերի հանցանքը: Նա պատժվեց մեր փոխարեն: Նա մեռավ ու հարություն առավ: Երբ մարդ զղջում է իր արած մեղքի

համար, Հիսուսը ներում է նրան: Դրանից հետո մեղքը համարվում է ներված, և Աստված խոստացել է այլևս չհիշատակել այն:

– Ստացվում է, կարելի է մեղանչել և զղջալ, մեղանչել և զղջալ, և քեզ ոչինչ չի՞ լինի,– կասկածանքով հարցրեց Սեյրանը:

– Աստված տեսնում է մարդու սիրտը և ընդունում է միայն անկեղծ զղջումը:

Սեյրանը մտքերի մեջ ընկավ.

– Համարենք, ես անկեղծ զղջացի, և Աստված ներեց ինձ: Իսկ ինչպե՞ս ապրել դրանից հետո: Ինչպե՞ս կատարել այդ բոլոր պատվիրանները: Սրանց նման տախտակներ պատրաստել և հետը ման տալ. ընթերցել ու վերընթերցել դրանք. կարծում ես դա ինձ կօգնի՞:

– Աստված հին ժամանակներում խոստանում էր, որ կգա մի ժամանակ, երբ Նա Իր օրենքը կգրի մարդկանց սրտերում: Մենք հիմա ապրում ենք այդ ժամանակում: Երբ մարդն ապաշխարում է և ընդունում Հիսուս Քրիստոսին իր կյանքի մեջ, Սուրբ Հոգին բնակվում է նրա սրտում և օգնում է հաղթել մեղքին,– պատասխանեց Անահիտը:

– Իսկ դու միշտ կարողանու՞մ ես հաղթել,– հարցրեց Սեյրանը:

– Ոչ միշտ,– խոստովանեց Անահիտը,– սակայն Աստծո համար կարևոր է, որ մենք սովորենք սիրել Նրան և սիրել մարդկանց, այսինքն՝ ձգտել արդարության, և սիրով վարվել: Այդ ժամանակ օրենքը կարծես գրված լինի քո սրտում, դու կուզենաս կատարել պատվիրանները, քանի որ դրանք Աստծունն են: Դա միանգամից տեղի չի ունենում, դա կարծես սար բարձրանալու նման լինի. կարևորը՝ նպատակ ունենաս ու գնաս դեպի այն:

– Ամենակարևորն այն է, որ սարը մենք մենակ չենք բարձրանում, Քրիստոսը գալիս է մեզ հետ: Երբ մենք ընկնում ենք, Նա բարձրացնում է մեզ: Ես դրանում համոզվել եմ, և շատ եմ ուզում, որ Նա դառնա նաև քո Ընկերը,– ասաց Դավիթը:

– Այո, այդպիսի ընկերոջ հետ սարսափելի չէ անգամ ամենաբարձր սարը բարձրանալ,– համաձայնվեց Սեյրանչոն,– իսկ ինչի՞ց պետք է սկսեմ:

– Աղոթքից,– միահամուռ պատասխանեցին Անահիտն ու Դավիթը:

1
Ես եմ Եհովան
քո Աստուածը,
Բացի ինձանից ուրիշ
աստուածներ չ'ունենաս:

2
Քեզ համար կուռք
չ'շինես, Նորանց
երկրպագութիւն չ'անես,
եւ նորանց չ'պաշտես:

3
Քո Եհովայ Աստուծոյ
անունը դարտակ տեղը
չ'յիշես:

4
Յիշիր հանգստութեան
օրը նորան սուրբ պահելու
համար:

5
Պատուիր քո հօրը եւ
քո մօրը:

6
Սպանութիւն մի անիր:

7
Շնութիւն մի անիր:

8
Գողութիւն մի անիր:

9
Սուտ վկայութիւն
մի անիր:

10
Մի ցանկանար:

Գիտե՞ս, ինչ է աղոթքը: Դա զեղեցիկ խոսքերի հավաքածու չէ, պարզապես խոսակցություն չէ, շնորհակալությունների ու խնդրանքների ցանկ չէ: Դա մարդու մնույնացումն է Աստծո հետ:

Պատկերացրու, որ դու նստած ես պատուհանը խուլ փակված մի սենյակում: Ու հանկարծ որոշում ես բացել այն: Դու բացում ես պատուհանն ու պայծառ լույսի, թարմ օդի ու մեղմ ջերմության հոսքը ներխուժում է սենյակ: Քո սենյակը մեկ ամբողջություն կազմեց հսկայական, պայծառ աշխարհի հետ:

Երբ մարդ աղոթում է, Աստծո լույսն ու սիրո ջերմությունը լցնում են նրա սիրտը: Մարդը մեկանում է Աստծո հետ:

Ի՞նչ է անում Աստծո ճշմարտության լույսը: Այն լուսավորում է մութ անկյունները, ցուցում է տալիս, թե որն է պետք կարգավորել, որը՝ նորոգել, որը՝ դեն գցել:

Ի՞նչ է անում Աստծո սիրո ջերմությունը: Այն մխիթարում է, քաջալերում, սնում:

Մի՛ նստիր մութ սենյակում, բա՛ց արա քո սրտի պատուհանը Տիրոջ առաջ: Միայն այդպես դու կարող ես համոզվել, որ կյանքը հիասքանչ է և լցված է ուրախությամբ: Միայն Հիսուս Քրիստոսի հետ դու կկարողանաս հասկանալ Աստծո օրենքը: Միայն Նրա հետ Աստծո պատվիրանները քեզ համար կդառնան ոչ թե անտանելի ծանրություն, այլ թանկագին մի բեռ:

ՀԻՍՈՒՍԸ ԵՒ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

Աստված շատ է ուզում հաղորդակցվել մարդկանց հետ: Մենք այդ ջերմ ցանկությունն անվանում ենք սեր և շնորհ: Որպեսզի մարդիկ ինչ որ չափով պատկերացում ունենան Աստծո մասին, Նա տվեց Իր Խոսքը՝ Աստվածաշունչը, իսկ որպեսզի ճանաչեն Նրան՝ պատվիրանները: Այդ պատվիրանների միջոցով Աստված սահմանեց պայմաններ, որոնցով մենք կարող ենք մոտենալ Նրան, աղոթել Նրան, ինչ–որ բան հարցնել կամ խնդրել Նրանից: Ինչպես ես մտածում. մենք կարո՞ղ ենք բավարարել այդ պայմանները: Չէ՞ որ դու հիմա անգիր գիտես բոլոր Տաս Պատվիրանները, ճի՞շտ է: Ուրեմն ի՞նչ ես կարծում:

Ես մտածում եմ, որ երկրի վրա այդպիսի մարդ չկա, որ կարողանար կատարել ամբողջ օրենքը: Իսկ Հիսու՞սը: Ճիշտ է, այն կատարեց միայն Հիսուս Քրիստոսը: Նա ասաց.

«Մի կարծէք, թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները քանդելու. Ես չ'եկայ քանդելու, այլ կատարելու» (Մաթ. 5:17):

Ընդհանուր առմամբ, իրավիճակն այսպիսին է. Աստված եկավ այս աշխարհ Հիսուս Քրիստոսի անձում, որպեսզի մենք վերջապես կարողանանք Նրա հետ հաղորդակցություն ունենանք: Աստված մարդացավ: Նա ծնվեց Մարիամ անունով մի աղջկանից Բեթլեհեմում: Մենք այս իրադարձությունն ենք նշում, երբ տոնում ենք Սուրբ Ծնունդը:

Հիսուսն ապրեց ու դաստիարակվեց Նազարեթում և երիտասարդ հասակում դարձավ Ավետարանի (Բարի Լուրի) քարոզիչ: Հիսուսն ուներ աշակերտներ, որոնց Նա առաքյալ անվանեց, այսինքն՝ ուղարկված: Նրանց Նա ուղարկեց աշխարհով մեկ Ավետարանը քարոզելու բոլոր մարդկանց:

Երեք տարվա քարոզչությունից հետո, Հիսուսին ձերբակալեցին, մեղադրեցին աստվածհայհոյության մեջ (Նա, Աստված լինելով, Իրեն Աստված էր անվանել) և խաչեցին: Մենք նշում ենք նաև այս իրադարձությունները: Ինչու՞ ենք մենք նշում Քրիստոսի մահը: Հենց այն բանի համար, որ Նա մահացավ բոլոր մարդկանց մեղքերի համար, այդ թվում՝ քո և իմ: Ամեն անգամ, երբ եկեղեցում հաղորդության արարողություն է տեղի ունենում, մենք հիշատակում ենք Հիսուս Քրիստոսի մահը: Բայց Հիսուսը չի շարունակում մեռած մնալ. Նա հարությո՛ւն առավ: Եվ իհարկե, մենք դա նույնպես տոնում ենք: Այն կոչվում է Զատկի տոն, այսինքն՝ «ազատագրում»: Հիսուս մեռելներից հարություն առավ: Դա նշանակում է, որ Աստված Նրա մահն ընդունեց որպես զոհաբերություն: Վե՛րջ: Մենք այլևս պարտավոր չենք մեր մեղքերի պատիժը կրել, եթե մենք հավատում ենք այն բանին, ինչ Հիսուսն արեց մեզ համար և ընդունում ենք Նրան որպես մեր Տերն ու Փրկիչը: Հենց սա է Ավետարանը: Հիսուսը եկավ ու կատարեց օրենքը. օրենքի մեր բոլոր խախտումները Նա Իր վրա վերցրեց: Հիմա մենք կարող ենք չվախենալ, որ դատաստանի տակ կընկնենք: Մեր փոխարեն Հիսուսն է դատապարտվել:

Իսկ պատվիրանները՞ը: Պե՞տք է դրանք կատարել: Իհա՛րկե: Աստված հո չի փոխվել: Միայն թե հիմա մենք դա կարող ենք անել ոչ թե դատապարտվելու վախից, այլ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրուց ելնելով, Ով մեզ ցույց տվեց, թե ինչպիսին է մեր Աստվածը, այսինքն՝ մեզ սիրող Հայր, Ով մեզ ուժ և ցանկություն է տալիս կատարելու Նրա կամքը:

Եթե դու մինչև հիմա չես ապաշխարել քո մեղքերից և չես խնդրել, որ Հիսուս Քրիստոսը ների քեզ ու դառնա քո Փրկիչը, ապա դու դա կարող ես անել այսօր, հենց հիմա: Նվիրիր Նրան քո կյանքը, և հավիտենության մեջ դու կլինես Նրա հետ:

ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Սինան ու անապատը մնացին ետևում,
Հիսուսը ծնվեց Բեթլեհեմում,
Բայց չտեսան Աստծո Որդուն՝Նրանում
Անգամ նրանք, ովքեր օրենքն էին սովորեցնում:

Հասկանալով, որ ուժերն են անհավասար,
Փորձում էին Նրան խոսքով բռնել ստորաբար.
«Ուսուցիչ, ո՞ր պատվիրանն է ամենամեծը,
Չէ՞իր կարող Դու մեզ ասել»:

Քրիստոս լսում էր վշտով ու ափսոսանքով.
Եթե միայն մարդիկ կարողանային հասկանալ,
Որ փրկություն կատարելով, շուտով
Պետք էր Նրան խաչը բարձրանալ:

Օրենքը ջանքով ու եռանդով սովորելով,
Կարևոր է ու պետք է ամենից առաջ,
Տեր Աստծուն սիրել ողջ սրտով,
Եվ մարդկանց՝ ինչպես ինքներս մեզ:

ՑԱՆԿ

1. Ուխտի տախտակների մակետը 3

Իսրայելի Աստված մեր Աստվածն է 6

Կյանքի կանոնները 8

2. Աստծո սիրուց մղված 9

Առաջին պատվիրանը 12

Քո Տեր Աստվածը 14

3. Կուռքեր 15

Երկրորդ պատվիրանը 18

Մի՛ երկրպագիր կուռքերին 20

4. Միայն գեղեցիկ խոսքեր 21

Երրորդ պատվիրանը 24

Խիստ պատվիրանը 26

5. Տոն 27

Չորրորդ պատվիրանը 30

Հատուկ օրը 32

6. Ոչ միայն ենթարկվել 33

Հինգերորդ պատվիրանը 36

Պատվիր քո հորը և մորը 38

7. Աստծո թանկարժեք պարգևը 39

Վեցերորդ պատվիրանը 42

Մի՛ սպանիր 44

8. Չափից ավելի մեծ գին 45

Յոթերորդ պատվիրանը 48

Անհավատարմություն 50

9. Ինչպես գնահատական գողանալ 51

Ութերորդ պատվիրանը 54

Մի՛ գողացիր 56

10. Գեղեցիկ սուտ 57

Իներորդ պատվիրանը 60

Կենդանի պատվիրանը 62

11. Իսկական գանձեր 63

Տասերորդ պատվիրանը 66

Մի՛ ցանկացիր 68

12. Թանկագին բեռը 69

Հիսուսը և պատվիրանները 74

Գլխավոր պատվիրանը 76